


Մշակութային և Հասարակական  
Երկշաբաթաբեր  
**Հոյն**  
1200 թուման  
Հայաստանում 320 դրամ



# ԵՐԳԻՉԸ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՅՐ

ՇԱՌԼ ԱԶՆԱԴՈՒՐԻ ԳՆՅՈՂ ՀԱՐՅԱԶ-  
ՐՈՅԻՆ «ԻՆՉ ՀԱՄԱՐ ՄԻԵԽՆՈՅՆ Է,  
ԳՆԴԱՄՊԱՆՈՒԹԻՒՆ, ԹԷ ԱՅԼ ԲԱՌ»

# ԱՅՍ ՀԱՄԱՐՈՄ

- 2 **Թեմական խորհրդի մամուլայ առուվիճակը**  
Քաթրին Եաղուբի
- 4 **Կլոր սեղան հայ մամուլի մասին.**  
Տպաքանակ՝ առաւելագոյնը 5000
- 15 **Գիտանկիւն՝ Վիքիփեդիան հայերէնով**  
Կոլիա Տէր Յովհաննիսեան
- 16 **Հարցազրոյց «Համշէն» գրքի հեղինակ՝**  
**Յովան Սիմոնեանի հետ**  
Արմինէ Մելիք-Իսրայելեան
- 20 **Կեան թագուհու աւետարանից պոկած**  
**մանրանկարների վերադարձը**  
Դոկտ. Տէր Ներսէս աւագ քահ. Ներսէսեան
- 24 **Մարզանք**  
Արման Տէր Ստեփանեան

Մշակութային եւ Հասարակական

# Յոյս

Երկշաբաթաթերթ

Ե սարի, քիւ112, Դեկտեմբեր 7, 2011,  
1200 թուման  
Հայաստանում 320 դրամ



- 8 **Երգիչը՝ քաղաքական այր**
- 8 **Շառլ Ազնաւուրի ցնցող հարցազրոյցը**  
**Նուվէ Գ՝ աղմէնի ամսաթերթի հետ**
- 13 **Յուսախաբ եւ վշտահար ենք Ազնաւուրէն**  
**Չայկ Նազգաշեան**

## Պ ա ր ս կ ե ր է ն ք ա ժ ի ն

<p>2 <b>Այս համարի հայերէն էջերում</b></p>	<p>5</p>	<p>Ռոբերթ Սաֆարեան</p>	<p>10</p>	<p><b>Ասիան միացնել Եւրոպային. Իրան-Հայաստան երկաթազծի կարեւորութիւնը</b> Սարգիս Մանուկեան</p>
<p>3 <b>ՀԱԿ-ի եւ «Քարգաւաճ Հայաստան» կուսակցութեան համագործակցութեան հաւանականութիւն</b> Սուրէն Մուսայելեան</p>	<p>7</p>	<p><b>Էրոզդանի ներողութիւնը ջուրղերից</b> Նաիրա Չայրումեան</p>	<p>13</p>	<p><b>Յովսէփ Էմին. Կալկաթայից՝ Լոնդոն, Մոսկայից՝ Թիֆլիս, Հայաստանի ազատագրման համար</b> Յովիկ Սինասեան</p>
<p>4 <b>«Ալիք» օրաթերթի 80-ամեակի մասին մի յօդուածի արձագանքը «Հայելի» կայքում</b></p>	<p>8</p>	<p><b>Հայ ժամանակակից լուսանկարիչներ՝ Գարիկ Աւանեսեան</b></p>		

<p><b>Յոյս</b> Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ</p> <p>Արտօճատը՝ Լեւոն Ահարոնեան</p> <p>Խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեան</p>	<p>Խմբագրական կազմ՝ Քարմէն Ազարեան, Լիա Խաչիկեան, Գարուն Սարգսեան, Արմինէ Մելիք-Իսրայելեան</p> <p>Գեղարւեստական ձեւաւորում՝ Լիա Խաչիկեան</p>	<p>Հայերէն բաժնի սրբագրիչ՝ Քարմէն Ազարեան</p> <p>Կայք Քաջիկ Սաֆարեան</p> <p>Մարզական Արման Տէր Ստեփանեան</p> <p>Բաժանորդագրութիւն Քաթրին Եաղուբի</p>	<p>Հասցէ՝ Թեհրան, Էնդելաբ պողոտայ, Վալի Ասր քառուղի համար 1048 66495180 66492693</p> <p>Հեռախօս-հեռապատճեն՝ 66495208</p> <p>hooyes@inbox.com www.hooyes.com</p>
---	--	--	---

# Թ.Հ.Թ. ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՊԱՏԱՍԽԱՆԵՑ ՄԱՍՈՒԼԻ ՀԱՐՅԵՐԻՆ

Քաթրին Եաղուրի

Կիրակի Նոյեմբերի 20-ի առաւօտեան կայացաւ Թ.Հ.Թ խորհրդի առաջին մամուլային ասուլիսը՝ հայկական թերթերի ներկայացուցիչների հետ: Այս հանդիպմանը, ներկայ էին «Ալիք» օրաթերթի, «Յոյս» երկշաբաթաթերթի եւ «Արաքս» շաբաթաթերթի լրագրողները:

Սկզբում լրագրողների կողմից հնչեցին հարցեր, որից յետոյ պրն. Բաբախանեանն ու թեմական խորհրդի միւս անդամները պատասխանեցին նրանց:

Հիմնականում հարցերը «Աւետիսեան» Բուժարանի, «Արամ» սրահի, «Սահակեան» եւ «Թունեան» դպրոցների, «Արարատ»-ի սեփականութեան, Հայաստանում գնւած հողամասի, «Նայիրի» միութեան եւ «Սուքերեան» սրահի, «Սիփան» ու «Փերիոյ կրթասիրաց» միութեանների եւ «Նայիրի» սրահի, հայ դպրոցների ու մանկապարտեզների ուսուցիչների աշխատանքային ապահովութեան վերաբերեալ էին, որոնց հերթաբար պատասխանեցին խորհրդի անդամները:

«Յոյս»-ին յատկապէս հետաքրքրած «Թունեան» տարրական դպրոցի վերջին անցուդարձերի եւ մի քանի այլ խնդիրների վերաբերեալ արտայայտուեցին թեմական խորհրդի ատենապետ պրն. Էդւարդ Բաբախանեանը եւ պրն. Ռուբիկ Սարխտշեանը: Ստորեւ ներկայացնում ենք այդ հարցազրոյցի որոշ հատուածները.

**-Ի՞նչ պատճառով «Թունեան» դպրոցի կառուցումը վերջնականապէս չաւարտուած՝ աշակերտութիւնը այնտեղ տեղափոխուեց, եւ ո՞վ է դրա պատասխանատուն:**

-Պարզ է, որ թեմական խոր-



հուրդն է այս հարցի պատասխանատուն:

«Թունեան» դպրոցի վերաբերեալ, մի բան որ արդէն շատ է խօսուել, եւ ուզում են ասել, որ հարցը, չգիտես ինչու, այդքան մեծացաւ: Երբ նոր թեմական խորհուրդը կեանքի կոչուեց, «Թունեան» դպրոցի շինարարութեան աշխատանքն արդէն ընթացքի մէջ էր: Այդ ժամանակ դպրոցի կազմն ու ծնողական խորհուրդը մտահոգուած էին «Թունեան»-ի աշակերտութեան միւս դպրոցներ գնալու մասին, որով անմիջապէս յայտարարութիւն տուեցին «Ալիք»-ում՝ նոր շէնքում արձանագրութիւնների մասին: Թեմական խորհուրդը փաստի առջեւ կանգնեց, այդ պատճառով ու նաեւ որպէսզի ժողովրդի երկար սպասուած երազանքը իրականանայ, յանձն առաւ դպրոցի բոլոր գործերը եւ նամակի ստորագրումից մինչեւ պիտոյքների կարգաւորելը, գիշերայ 1-ին դպրոցի դատարկելը, բոլորը կարգադրեց:

Մենք աշխատեցինք, որ ճիշտ այն թւականին, ինչ որոշուել էր, դպրոցի բացումը կատարուի, բայց դա ուշացումով եւ Մշակոյթի Շաբաթեան կատարուեց: Դժբախտա-

բար կապալառուի թերացման պատճառով երկու տեղ բաց էր մնացել, եւ երբ անձրեւները սկսեցին, պատճառ դարձաւ, որ կախովի առաստաղը ուռչի ու որոշ կտորներ ցած ընկնի:

Այո, այդ պատահարը եղել է, չպէտք է լինէր, չպէտք է նման բան պատահէր, բայց պատահել է, եւ մենք բոլորս աշխատում ենք, որպէսզի այդ հարցը լուծենք: Ցուրտը, որ ընկաւ, ջեռուցման սխտեմները չէին գործում, սխտեմի գործելու համար պիտի տեստ լինէր, տեստն էլ այսպէս է, որ միացնում են ու ճնշման տակ դնում: Իհարկէ տեստը պաղ ջրով արեցինք, բայց տաքով՝ ոչ: Գազը, որ միացրինք, այդ խողովակները սկսեցին ջուր տալ, բայց այնպէս, ինչպէս համայնքում արձագանքուեց թէ՛ ջուրը թափուել, թրջել է՝ ո՛չ, մի քանի տեղից խողովակները սկսեցին ջուր տալ: Չգիտես ինչու այդքան մեծացել են համայնքում: Ես անգամ կապալառուի հետ ունեցած իմ թէ՛ խօսակցութեան ժամանակ շեշտեցի թէ՛ չպիտի նման բան լինէր ու մեզ հարցի տակ տանէին, եւ ստիպեցինք նրան 24 ժամով ստուգել:

Մեզ տեղեկացրին թէ՛ ջուրը

թափել է բոլոր ֆայլերը թրջել են, բայց երբ տեսուչից հարցրինք թե՛ ի՞նչ ֆայլեր են թրջել, տեսուչն ասաց թե՛ ոչ մի ֆայլ էլ չի թրջել: Չգիտեմ ինչու են աշխատում այս հարցն ավելի մեծացնել, մենք չենք ասում թե՛ ոչ մի բան չի եղել, այո՛, ասում ենք թե՛ պատահել է, եւ մենք պատասխանատու ենք մեր համայնքին, բայց շատ ավելի լավ կը լինի հակառակ իրար դեմ, իրար կողքի կանգնել ու խնդիրները լուծել: Մեր համայնքը միշտուայ պէս, շատ ավելի թափանցիկ ու ազնիւ գտնուեց, երբ նրանց այդ ապահովութիւնը տեսցինք թե՛ ոչ մի վտանգ ու սպառնալիք չկայ իրենց երեխաների համար, եւ ամէն ինչն ընթացքի մէջ է, հակառակ ծնողական խորհրդին, որը պնդում էր տեղափոխել նախկին դպրոցը, եւ մենք յարգելով նրանց, ասացինք, որ եթէ մեծամասնութիւնը համաձայն է տեղափոխելու, մենք այդ յանձն կառնենք եւ կընդունենք, բայց բարեբախտաբար ծնողները, որ այս համայնքի պատկերն են, որ մենք միշտ ասել ենք, թե՛ ճիշտ են դատում, ճիշտ են խօսում ու ճիշտ են բողոքում, ընդունեցին մեր առաջարկն ու շարունակեցին շաբաթ օրուանից երեխաներին դպրոց ուղարկել:

Ունենք նաեւ գազի եւ էլեկտրական հոսանքին կապած հարցեր, որ գազի ուշացումը պետական հարց էր, իսկ էլեկտրական հոսանքի հարցը դեռ հետեւում ենք...

Մանկապարտէզի վերաբերեալ, այս անգամ մինչեւ ամէն ինչ տեստ չանենք, մինչեւ ամէն ինչից չվստահանանք, թէկուզ մեր ասած ժամկետից ուշացած էլ լինենք, բացում չենք կատարի, որպէսզի նոյն փորձանքին դէմ չառնենք: ...Իսկ հին դպրոցի քանդելու վրայ ծախսւած 70 միլիոնի հարցը Պատգամաւորական ժողովը արդէն հետեւում է եւ սպասում ենք նրանց արդիւնքին:

-Ռուբիկ Սարխոշեան. ...Երբ որոշեց դպրոցը կառուցել, մագուրդին մասնակցած հինգ ընկերութիւններ 1,800,000,000-ից մինչեւ 2,200,000,000 միլիոն թուման առաջարկներ ներկայացրին: Մենք ամենացածր առաջարկողի հետ խօսեցինք, եւ համաձայնութեան հասանք գեղջով ամենացածր գնի հետ՝ 1,650,000,000 միլիոն թումանի:

Երբ կապալառուի աշխատանքն սկսեց, եթէ մենք որոշել էինք օրինակ պատերը սօֆալից (խեցեայ) լինի, յետոյ տեսանք թե՛ ավելի լավ է մի այլ միւթից միւթից լինի, կամ թէ լուսամուտները, իսկ երկաթի կշիռը, որ շինարարութեան ընթացքում նկատեցինք թէ ավելի շատ կարիք ունենք: Այսպիսով ամէն մի շինարարութեան ժամանակ մի բէյս կայ արժեքների համար, որը կարող է մինչեւ 25% բարձրանալ: Մենք աշխատել ենք ամենալավ ու ընտիր շինանիւթերից օգտագործել, որպէսզի այդ շէնքը ամուր լինի թէ երկրաշարժի եւ թէ՛ ուրիշ վտանգների դիմաց: ...Դպրոցի կառուցը պիտի այնքան ամուր լինի, որ 50-60 տարի լինի դրանից օգուտել:

**-Չայ համայնքի կալածքների ցանկը ե՞րբ է տրամադրուելու ժողովրդին:**

-Շուտով, սրանից յետոյ: Այսինքն գործնական ծրագիր ցանկը կը ներկայացնենք թէ՛ ինչեր ունենք, ինչքան ենք ստանում եւ ինչու ենք դեռ կարմիր գծի վրայ:

Կը յայտնենք, եթէ ունենք օրինակ այսքան վարձու խանութներ, տներ, եւ ստանում ենք մօտաւորապէս նախկինից որոշուած շուրջ 40 միլիոն վարձ, բայց ունենք նաեւ այսքան ծախսեր: Չենք մոռացել ու կը ներկայացնենք, քանի որ մեր համայնքը պիտի տեղեակ լինի: Այդ ցանկը կը պատրաստենք, մենք այդ ակնոցով ենք նայել, որ իմանանք թէ մեր ունեցած դժուարութիւններից, եւ թէ՛ մենք ինչերի

առջեւ ենք կանգնած: Այս ստանալիքի դիմաց, դրանով հանդերձ, որ համայնքը պակասել է, արդեօք քանի՞ ուսուցիչ է պակասել, քանի՞ շէնքի ծախս է պակասել:

Այո, թիւը պակասել է, բայց ծախսերը նոյնն է:

**-Պետութեան տւած նպաստի մասին ի՞նչ կատք:**

-Պետութեան նպաստը յատուկ գումար չէ մեզ համար, ավելի շուտ կուածաղիկ է, այնպէս որ երբ բաժանուում է միութիւնների մէջ բողոք է առաջացնում: Ընդհանուր գումարը տարեկան շուրջ 300 միլիոն թուման է:

Մենք քանի տարբեր ֆոնդեր ունենք, օրինակ համալսարանական ֆոնդ, որին 60-70 ուսանողներ ունի, բայց դա մեզ չի բաւարարում ու մենք ստիպւած դիմում ենք տարբեր անհատների օժանդակութեան:

Օրինակ անցեալ տարւայ 280 միլիոն թուման վճարւածից 18% միութիւններին, իսկ 82% բաժանւել է եկեղեցիների, դպրոցների... միջեւ: (Ներթելի աղիւսակը-«Յոյս»)

Եկեղեցիներ	7%
Դպրոցներ	15 %
Կարիքաւորների օժանդակ մարմին	10%
Կարիքաւորների բնակարան	5%
Ուսանողական ֆոնդ	7%
Չեռնարկներ	5%
«Աւետիսեան» բուժարան	9%
Շէնքերի պահպանող	7%
«Ալիք»	10%
Պատգամաւորական գրասենեակ	7%

**-ԹՅԹ Կանոնագրութեան վերանայման վերաբերեալ արդեօք որեւէ աշխատանք կատարե՞լ է:**

-Մենք չպիտի վերանայենք, Պատգամաւորական ժողովն է, որ պիտի այդ գործն անի եւ կարծում են, որ արդէն կեանքի կոչւած յանձնախումբը աշխատանք տանում է, ... եւ դա վերանայում է, որպէսզի ամէն ինչ իր տեղն ունենայ եւ ամէն մարդ իմանայ իր պարտականութիւնները, իմանայ թէ ով ինչի պատասխանատու է, օրինակ՝ եթէ հարց են տալիս «Թունեան» դպրոցի պատասխանատուն ո՞վ է, ասում ենք կրթական խորհուրդը եւ այլն: Ժողովուրդը պէտք է իմանայ թէ ինչը ում սահմանների մէջ է, կրթականի՞, կրօնականի՞ թէ՞ Սրբազանի:

Յոյս ունենք, որ դա ընթացքի մէջ է եւ կը վերանայի:

Վերջում թեմական խորհրդի անդամները յաւելեալ բացատրութիւններ տւեցին «Թունեան»-ի շինարարութեան, հանգստարանի խնդիրների ու Հայաստանի համահայկական խաղերի ծախսերի վերաբերեալ, եւ յայտարարեց, որ թափանցիկութեան նպատակով մամուլին հնարաւորութիւն է տրուում, որ այսուհետ որեւէ հարց ունենալու դէպքում զանգահարել ազգային առաջնորդարան եւ ուղղակիօրէն հարցնել պատկան մարմնից, կարելի է միանալ թեմական խորհրդի գրասենեակ եւ ուղղակիօրէն տւեալ հարցի պատասխանը ստանալ:

## Կլոր սեղան հայ մամուլի մասին

Չորեքշաբթի, Նոյեմբերի 16-ին, «Ալիք» օրաթերթի 80-ամեակը մեծարող յանձնախմբի նախաձեռնութեամբ «Հայ Ակումբ»-ի փոքր սրահում տեղի ունեցաւ կլոր սեղան նիւրած Հայերէն մամուլին առնչող հարցերին ու դժարութիւններին: Կլոր սեղանին մասնակցում էին «Ալիք» օրաթերթի խմբագիր Դերենիկ Մելիքեանը, «Դրօշակ» թերթի խմբագիր Կարէն Խանլարեանը, «Հայելի» կայքի վարիչ Սեւան Պետրոսեանը, Հայերէն ռադիօժամի աշխատակից Ռոբերթ Մարգարեանը եւ «Յոյս» երկշաբաթաթերթի խմբագիր Ռոբերթ Սաֆարեանը: Կլոր սեղանը վարում էր Բաֆֆի Փիրումեանը: Ելոյթների ընթացքում հեռախօսային եւ ինտերնետային կապ հաստատուեց Հայաստանի եւ սփիւռքի մի քանի լրագրողների հետ, որոնք իրենց տեսակէտները յայտնեցին հայ մամուլի հարցերի մասին:

Կլոր սեղանը ուղղակի դէմ առ դէմ վիճաբանութեան չվերածուեց, թէւ նկատելի էր կարծիքների զանազանութիւնը: Նաեւ հնարաւոր չդարձաւ խօսակցութիւնը առաջնորդել դէպի նախատեսուած հարցերը: Յամենայն դէպս, հնչեցին հետաքրքիր տեսակէտներ, որոնց ընտրանին ներկայացնում ենք ստորեւ:

### Կարէն Խանլարեան

-Թէ՛ Հայաստանում եւ թէ՛ սփիւռքում, հայ մամուլը ունեցել է առանցքային դեր: Նոյնիսկ ռադիոյի եւ հեռուստատեսութեան զարգացման պայմաններում, մեր գրաւոր մամուլը չի զիջել այդ նոր միջոցներին: Ըստ վիճակագրական պատկերների, Ժամանակներ են եղել, որ սովետական Հայաստանում ամէն մարդու հասնում էր մի թերթ:

Հայապահպանութեան խոշոր ֆունկցիա միշտ մամուլի առջեւ է եղել: Իհարկէ այն ունեցել է նաեւ հասարակական ու քաղաքական դերակատարութիւն:

### Դերենիկ Մելիքեան

-Արդէն կայացել են համահայկական մամուլի ժողովներ, որոնց եզրայանգումը հետեւեալն է՝ դրանք համահայկական գերխնդիրներ, համահայկական մտածողութիւն, համահայկական նոր միտք ձեւաւորելու խնդրի առջեւ են կանգնեցրել մեզ:

Ես կարծում եմ համընդհանուր խնդիրը սա է. բազմազան եւ դժար-

րութիւնները, սկսած տեղական սփիւռքեան տարբեր խոչընդոտներից, մարդուժից, հայերէնի նահանջից, մինչեւ հայաստանեան կտրածքով այն փոքրէջնալիզմը, որը կոչւում է Ժուռնալիզմ, եւ այն մտայնութիւնը, որ այսօր հայկական մամուլը փոփոխութիւնների լայնածաւալ խնդիրների առջեւ է կանգնած: Հայաստանեան մամուլի համար ներկայ վիճակը անցումային փուլ է:

### Բաֆֆի Փիրումեան

-«Առաւօտ»՝ 5-6 հազար, «Ազգ»՝ 4 հազար, «Հայոց Աշխարհ»՝ 3500. Ահա մեր մամուլի տպաքանակի պատկերը: Ինչո՞ւ հայ մամուլի տպաքանակը չի անցնում քանի հազարից, մինչդեռ մենք պիտի 50-60 հազար տպաքանակով թերթ ունենանք Հայաստանում:

### Ռոբերթ Մարգարեան

-Սա միայն մեր խնդիրը չէ: Արբանեակային եւ ինտերնետային տեխնոլոգիաների զարգացմամբ, բնական է, որ հետաքրքրութիւնը մամուլի նկատմամբ պակսի:

# Ի ԵԼԱԳՈՅՆԸ 5000



Իմիջիայլոց, լաւ կը լինի խօսենք զանգւածային լրատւամիջոցների մասին եւ ոչ թէ միայն մամուլի, որը բնականաբար մեզ սահմանափակում է տպագիր թերթի:

## Սեւան Պետրոսեան

-Մենք մեր վրայ ենք վերցնում առաջին հերթին լուրերի տարածումը: Մի բան, որ այսօրւայ համացանցի եւ սոցցանցերի պայմաններում, ուշացած է դառնում: Մեր մամուլում պակասում է աւելի վերլուծական միւթերը: Կան մի շարք կարեւոր խնդիրների մասին, կարծես, մենք որոշել ենք, թէ չարժի անդրադառնալ: Օրինակ գլոբալիզացիան եւ հայերը, կամ սփիւռքի պայմաններում գլոբալիզացիան: Կան Վիքիլիքսի մասին անդրադառնում ենք այն ժամանակ, երբ Հայաստանի մասին ինչ-որ բան են հրապարակում: Ի վերջոյ մենք էլ ես աշխարհի մի մասն ենք կազմում եւ կարելի է մնան հարցերի էլ անդրադառնալ: Մենք մեզ սահմանափակում ենք: Սա կարող է տարբեր պատճառաբանութիւններ ունենայ: Ասում

ենք համայնքը պիտի համախմբւած լինի, եթէ տեսակետների տարբերութիւն կամ պառակտութիւն կայ, դա պէտք չէ դրսեւորի: Կան մտածում ենք պէտք չէ համայնքի ներուժը մնան հարցերի վրայ վատնել, աւելի լաւ է այն ուղղւենք դէպի համայնքի զարգացումը կամ Հայաստան:

## Ռոբերթ Սարգսրեան

-Երբ հասարակութիւնը քաղաքականացում է, սկսում է հետաքրքրել քաղաքական հարցերով եւ բնականաբար այդ հետաքրքրութիւնը բաւարարելու միջոցներից մէկը դառնում է մամուլը: Հետեւաբար հետաքրքրութիւնը մամուլի նկատմամբ սկսում է բարձրանալ:

## Րաֆֆի Փիրումեան

-Որպէս թերթերի խմբագիրներ, ի՞նչ դժւարութիւններ ունէք:

## Ռոբերթ Սաֆարեան

Թոյլ տւեք խօսեն այն բաների մասին, որոնք ճանաչում են, ուր փորձառութիւն ունեն: Գալով

տպաքանակի խնդրին, պիտի ասեն, որ մեր տպաքանակների ցածր լինելը հիմնականում բնական է: Կան համայնքային թերթեր, որոնք տպագրւում են փոքր համայնքների համար, ցածր տպաքանակով: Օրինակ «Յոյս»-ը հիմնականում տպագրւում է իրանահայ համայնքի համար: Իհարկէ նաեւ իրանահայ համայնքը ներկայացնելու Հայաստանին եւ ինչու չէ նաեւ այլ հայկական համայնքներին: Հիմա նկատի ունենալով մեր բնակչութեան թիւը, ու նաեւ այն, որ այդ բնակչութիւնը հայերէնին չի տիրապետում, պիտի ասեն որ տպաքանակի ներկայ մակարդակները նորմալ է: Իհարկէ, այս ասելով, չեն ուզում եզրակացնեն, որ չպիտի աշխատենք այն բարձրացնել: Բայց ասենք հազար հինգ հարիւր կը դառնայ երկու հազար, երեք հազար, չի դառնայ քսան հազար: Մամուլը անկախ մի երեւոյթ չէ, այլ մի միջավայրի կամ հասարակութեան արտացոլումն է: Վերցնենք հանդուրժողականութեան պակասը մեր միջավայրում: Կան



«Յոյս» երկշաբաթաբերթի խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեան

այն, ինչ կոչուում է քննադատութիւն: Ոչ մի հարց, որ քննադատութիւնն հանդուրժելու հոգեբանութիւնը մեզ մօտ թոյլ է: Դա իհարկէ պատմական պատճառներ ունի: Մեր համայնքի պատմութիւնը մի բելեռացւած մթնոլորտ է եղել: Բայց փաստն այն է, որ քննադատութեան հասկացողութիւն մեզ մօտ համարեա չկայ: Սկսած նրանից, որ այսօր մի պարի ծրագիր կայ եւ վաղը ասենք «Ալիք»-ը անդրադառնում է եւ գրում է, թէ գործը թոյլ է եղել: Միւս օրը բողոքի հեռախօսներ ու ... թէ ինչու էք վատ գրում: Կամ համայնքում զանազան հոսանքներ գոյութիւն ունեն, որ կամ իրար հետ չեն խօսում, կամ իրար հետ կռում են: Մէջտեղը գոյութիւն չունի: Իմիջիայլոց մենք «Յոյս»-ում փորձում ենք այդ մէջտեղը լինել: Օրինակ մէկ համարում ունենք թէ ԹԻՄ-ի ատենապետի հետ հարցազրոյց, թէ Նոր Զուղայի թանգարանի գողութեան մասին երգիծական բանաստեղծութիւն: Չպիտի մտածենք, որ սրանցից կամ մէկը պիտի լինի, կամ միւսը: Իմ հասկացողութեամբ, մամուլը հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող



«Դրօշակ» թերթի խմբագիր՝ Կարէն Խանլարեան

տարբեր խնդիրների եւ տարբեր հոսանքների արտացոլումը պիտի լինի: Այս հասկացողութիւնը մեր մէջ բացակայել է: Եւ քանի որ «Ալիք»-ը մեր մայր օրաթերթն է, որը երկար տարիներ է տպագրւում է, երեւի սրա պատասխանատութեան մեծ մասը ծանրանում է նրա վրայ: Մեր դժարութիւնները որո՞նք են. հիմնականը հէնց քննադատութեան հասակացողութեան պակասն է, որը պիտի փորձենք մեր հասարակութեան մէջ զարգացնել: Դրանով մտածում են մեր տպաքանակն էլ մի քիչ կը բարձրանայ: Մենք ընդհանրապէս խուսափում ենք մեր ցաւալի հարցերը մամուլում արծարծել: Ասենք ամուսանալու թուրքիւնը շատացել է մեր համայնքում: Ասում են՝ լաւ էլ ինչ գրենք այդ մասին, իզուր հարցը հրահրենք: Ուզում ենք զեկոյց պատրաստել այդ մասին, ոչ ոք չի պատասխանում: Ընդհանուր հասկացողութիւնը այն է, որ եթէ հարցերի մասին խօսի, ամէն ինչ կը քայքայի:

**Դերեմիկ Մելիքեան**  
Որակին պիտի կարելորութիւն

տանք: Եթէ նոր լրատամիջոցների դիտորդների թիւը շատ է բարձրացել, մենք տեսնում ենք նաեւ որակի իջեցում: Վերցնենք զուտ քաղաքական նպատակներ հետապնդելու եւ քարոզչութիւն իրականացնելու, հասարակական ցնցումներ առաջացնելու, ցանկացած երկրի անվտանգութիւնը հարցականի տակ տանելու, սոցիալական ցանցերի գլուխ բարձրացնելու հանգամանքը: շատ լաւ է արագ ինֆորմացիա փոխանցելու հանգամանքը: Բայց եթէ մամուլի առաքելութիւնը պիտի խախտի, ինչ-որ ինքնանպատակ ինֆորմացիայի փոխանցելու համար, պիտի զգոյշ լինենք, որ մեր համընդհանուր խանդիրները չմոռացնեն: Ես կարծում եմ այս առաքելութիւնը կատարելու, անվտանգութիւնը պահպանելու հարցում մեծ դերակատարութիւն ունի հայկական մասնաւորապէս տպագիր մամուլը, որն ունի իր լսարանը, ունի իր պահանջարկը եւ դեռ գոյատեւելու է երկար տարիներ ...

**Ռոբերթ Սաֆարեան**

Չետաքրքիր դարձնելը լրագրութեան մէջ կարելոր է, եւ դա երկու կողմ ունի: Մի կողմը տեսքի խնդիրն է. գունաւոր ու գեղեցիկ լինել, թուղթը աւելի որակաւոր լինի, ... եւ այդպէս: Բայց դա հիմնականը չէ: Հիմնական սկզբունքն այն է, որ այն ինչ գրուում է մամուլում, անակնկալ ունենայ իր մէջ: Համարեա մեր բոլոր ձեռնարկները իրար նման են. սպասելի է դրանցում ով ինչ է ասելու: Անակնկալը այն է, որ դրանցից մէկում մէկը վեր կենայ եւ այնպիսի հարցերի մասին խօսի, որ սովորաբար այդ հանդէսներում չեն խօսում: «Հայագ»-ը փակւում է, դա ժողովրդի հարցն է, ինձ թուում է այդ մասին կը կարդան: Չետաքրքրութեան հարցը միայն զւարճալիքի հարց չէ: Հարցեր կան, որոնց մասին ժողովուրդը



«Հայելի» կայքի վարիչ՝  
Սեւան Պետրոսեան

խօսում է, բայց մեր մամուլի մեջ բացակայում են: Երբ դրանք արժարժում են, մի քիչ հետաքրքրու-  
թիւն է առաջանում:

**Կարէն Խանլարեան**

Տպագիր մամուլը հասարակու-  
թեան հայելին է: Հասարակութիւ-  
նը իր առջեւ դնում է այն հարցերը,  
որոնց լուծման կարողութիւնը  
գտնում է իր մօտ: Եթէ մամուլում  
չենք տեսնում այն ինչ ցանկանում  
ենք, երեւի դա նաեւ այն պատճա-  
ռով է, որ հասարակութիւնը  
դրանց լուծման հնարաւորութիւ-  
նը չի գտնում իր մօտ, ոչ թէ ցեմ-  
զուրաներ են տիրում եւ այլն եւ  
այլն... թէեւ դրանք էլ կան ... բայց  
հիմնականն այն է:

**Սեւան Պետրոսեան**

Թէ ինչո՞ւ կայք: Նախ ինտերնետը  
աւելի արագ է, աւելի ինտերակ-  
տիւ է, աւելի էժամ: Ասում է, որ  
ինտերնետը ոչ ոքու տարածքը չի:  
Կայքերը սոցցանցերի համեմատ  
ուշացած են ... միայն լուր չէ, որ  
մենք պիտի հրապարակենք: Այդ  
լուրը իր հետ պիտի ինչ որ շարու-  
նակութիւն ունենայ: Վերլուծա-



Հայերէն ռադիօժամից  
Ռոբերթ Մարգարեան

կան կան հարցի պատմութեան  
մասին մի բան: Հակառակ դէպ-  
քում ուշացած կը լինենք:

**Ռոբերթ Մարգարեան**

Ինչո՞ւ իւրաքանչիւր մամուլ իր  
կայքն ունի: Ռոպիտետեւ լրուամի-  
ջոցի համար նպատակը լուրը,  
գաղափարը, տեսակէտը ընթեր-  
ցողին, ունկնդրին կամ հանդիսա-  
տեսին փոխանցելն է: Տպագիր  
մամուլը կամ ինտերնետը միջոց-  
ներն են: Մի օր կարող ես մէկից  
օգտուել, մի օր՝ միւսից: Սրանք  
կարող են իրար լրացնել: Պիտի  
մամուլը միայն տպագիր, թղթե-  
թերթ հասկանլու գաղափարը մի  
կողմ դնենք:

**Դերենիկ Մելիքեան**

Պիտի շտապողականութիւնից  
խուսափել: Անպայման գեղեցկու-  
թիւն, անպայման գունազարդու-  
թիւն, արագ լրագրութիւն ... դրանք  
չպիտի պատճառ դառնայ, որ մենք  
զիջենք արժէքի վերածուած մեր ազ-  
գի համահայկական եւ պետական  
հարցերը: Այդ տեխնիկ հարցերը  
դրանց խախտման չպիտի ծառայի:  
Արագաշարժութիւնը շատ լաւ է,



«Ալիք» օրաթերթի խմբագիր՝  
Դերենիկ Մելիքեան

բայց ըստ իս հաւաստացիութիւնը  
աւելի կարեւոր է: Էլեկտրոնիկ մա-  
մուլը շատ արագաշարժ է, բայց  
հաւաստիացման ինչ երաշխիք  
կայ: Սենսացիոն, սկանդալային  
վերնա-գրերը շատ հաճելի է, կա-  
րող է հասարակական միտք ստեղ-  
ծել, բայց արդեօք ինքնամպատակ  
սենսացիոններով առաջնորդելու  
առաքելութիւն ունի մամուլը:  
Համայնքանին հասարակական  
կեանքում, համայնքում ցնցում չա-  
ռաջացնելու երեւոյթը մեզ համար  
գերազանց է, ոչ թէ դրա համար, որ  
վախենանք քննադատութիւնից,  
ոչ, նպատակասլաց քննադատու-  
թիւն թող լինի, ազատ խօսք լինի,  
խնդիրներ թերթում արժարժեն ...  
բայց այստեղ մի քիչ ոճի հարց է, ես  
կարող է հա-մարւեմ հանդուրժող,  
ազատ խօսքի ու ժողովրդավարու-  
թեան կարգախօսներին հետեւող,  
իմ ոճի արդիւնքում, բայց վաղը  
կարող է դա վնասակար լինել այն  
ընդհանուր առաքելութեանը, որին  
կոչւած ենք ծառայելու:

**ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՅԱԶՈՐԴ  
ՀԱՄԱՐՈՒՄ**

# ԵՐԳԻՉԸ՝ ՔԱ



Շառլ Ազնաուրին համարեա ամէն հայ ճանաչում է: Ֆրանսահայ անուանի երգիչ եւ դերասան, որը ներկայացնում է Հայաստանի Հանրապետութիւնը միջազգային կազմակերպութիւններում, այդ թում Իւնեսկոյում: Նա եղեռնի սարսափներն ապրած ընտանիքի զաւակ է, որը Հայաստանի անկախութիւնից յետոյ ոչ մի ջանք չի խնայել ծառայելու Հայաստանին եւ հայ ժողովրդին: Այժմ նա այն եզրակացութեան է հասել, որ ցեղասպանութեան բառի վրայ պնդելը արդիւնաւէտ չի կարող լինել, եւ իր փորձառութիւնից ելնելով, ասում է, որ ներկայի գործելակերպով, ոչ ոք չի օգնելու հայերին: Այս հարցերի մասին նա պարզ լեզուով խօսել է Ֆրանսիայում ֆրանսերէնով հրատարակուող «Նուվէլ դ'Ադմէնի» ամսաթերթին տուած հարցազրոյցում: Հարցազրոյցը տպագրուել է այդ թերթի Հոկտեմբերի համարում եւ բնականաբար արժանացել է խիստ քննադատութիւնների: Ստորեւ ներկայացնում ենք հարցազրոյցը թարգմանաբար, յետոյ՝ Հայկ Նազգաշեանի քննադատական յօդածը դրա մասին: Հարցազրոյցի հայերէն թարգմանութիւնը փոխ է առնուած հայաստանեան «Հետք» կայքից:

## ՇԱՐԼ ԱԶՆԱՒՈՒՐԻ ԳՆՅՈՂ ՀԱՐԳԱԶՐՈՅԻՆ «ԻՆՁ ՀԱՄԱՐ ՄԻԵԻՆՈՅՆ Է, ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ, ԹԷ ԱՅԼ ԲԱՌ»

*Vivement dimanche* (Վիւրման դիմանձ) հաղորդման Սեպտեմբերի 4-ի թողարկման ժամանակ հաղորդավար Միշել Դրիւկերի՝ ցեղասպանութեան մասին հարցին Շառլ Ազնաուրը պատասխանել է. «Դա խանգարող բառ է, այն նաեւ ինձ է խանգարում, այն, ինչ հիմա կասեմ, կարող է ինձ մէջքով դարձնել որոշ հայերի նկատմամբ, բայց ես կարծում եմ՝ դա կարելորդ չէ: Եթէ իսկապէս թուրքերը ազնութիւն ունեն ասելու, որ իրենց խանգարողը «ցեղասպանութիւն» բառն է, մենք այլ բառ կը գտնենք, միայն թէ սահմանները բացւեն, եւ թուրքական կառավարութիւնը մտածի մեզ հետ երկխօ-

*սութիւն սկսելու մասին»:* Լրագրողի այն նկատառմանը, թէ «1.5 մլն-ը պատկառելի թիւ է փոքրիկ երկրի համար», Ազնաուրը պատասխանել է. «2 թէ 1.5 մլն, նոյնն է: Երբ սպանում են 2 երեխայ կամ 1.5 մլն հայ կամ 6 մլն հրեա, նոյնն է: Սպանել են, ցանկացել են սպանել, դա է կարելորդ»:

**Նուվէլ դ'Ադմէնի - «Vivement dimanche»-ի ժամանակ արւած Ձեր յայտարարութիւններով Դուք միայն ընկերներ ձեռք չբերեցիք:**

Շառլ Ազնաուր - Ես սկսում եմ ծանծրանալ դրանից: Մենք յաջողութեան չենք հասնի, մենք երբեք յաջողութեան չենք հասնի: Մեր

հակառակորդները մեզանից սպասում են, որ նրանք, ովքեր դեռ յիշողութիւն ունեն, մեռնեն, որպէսզի դրանից պրծնեն: Ո՞ր երկիրն է աջակցել մեզ: Ոչ մէկը: Ֆրանսիան ճանաչել է այն, ինչ ճանաչել է, բայց նա աւելի հեռուն չի գնայ: Ոչ մի երկիր չի գայ դէպի մեզ: Երբեք:

Աւելին, յեղափոխութիւն անող արաբները երազում են քեմալական մոդելի հիման վրայ կառավարութիւն ստեղծել»: Սա ջուր է լցնում թուրքերի ջրաղացին, որոնք հարստանում են եւ զբաղեցնում էլ աւելի մեծ տեղ: Նրանք արդէն «Մեծ քսանեակի» անդամ են: Նրանք անգամ չեն անհանգս-

# ՆԱԲԱԿԱՆ ԱՅՐ

տանում Եւրամիութիւն մուտք գործելու մասին: Իսկ ո՞ւր ենք գնում մենք: Այս ընթացքում Հայաստանը տառապում է, ամէն օր Հայաստանը դատարկւում է: Քիչ ժամանակ անց այն կը դառնայ մի դատարկ խխունջ: Ո՞ւմ է դա ձեռնտու: Երեք մաֆիոզի՞: Եւ հարիր միլիոնաւոր աղքատ մարդիկ կը սփռւեն աշխարհով մէկ:

Այս բոլոր իրողութիւններն ինձ անհանգստացնում են: Իսկ մենք մնում ենք կենտրոնացած ցեղասպանութիւն բառի վրայ, որը թուրքերը շա-





**Ազնաուրի արձանը Գիւմրիում**

հարկում են: Արդ, ուրեմն, ես հարց եմ տալիս թուրքերին. «Եթէ դա ցեղասպանութիւն չէ, ապա ինչպէ՞ս կոչել մի ժողովրդի բնաջնջումը: Ինչպէ՞ս էք դուք այն անւանել ժամանակին: Ինչպէ՞ս էր Աթաթուրքն ինքը որակել այդ իրավիճակը: Դա եմ ես ուզում: Ինչպէ՞ս դա կը կոչւէր մինչեւ «ցեղասպանութիւն» բառը հնարելը: Կոտորա՞ծ: Յայերի կոտորա՞ծ: Եթէ դուք չէք ուզում օգտագործել «ցեղասպանութիւն» բառը, գոնէ խոստովանէք, որ դա կոտորած է եղել: Եթէ մենք դրան հասնենք, մենք մեծ յաջողութիւն կունեն-

անք»:  
 Հայաստանը մեծ վտանգի մէջ է, եւ բոլորը յապաղում են ցեղասպանութիւն բառի վրայ: Ես չեմ տեսնում, թէ դա ինչպէս է նպաստում երկրի առաջընթացին: Ո՞ր է տանում մեզ այդ տրամաբանութիւնը: Մարդիկ, ովքեր քննադատում են ինձ նման կարծիք յայտնելու համար, ո՞ր են նրանք: Ի՞նչ են նրանք անում Հայաստանին օգնելու համար: Ո՞ր պահին են նրանք գումար ուղարկում: Եւ նրանք ինձ դա՞ս պիտի տան: Այդ ես եմ առաջինը նրանց դաս տուել: Ես այս մասին խօսել եմ ԱՄՆ-ից

մի հայ փաստաբանի հետ, որի գրասենեակում առնուազն 300 իրաւաբան է աշխատում: Նա միւսների պէս էր մտածում: Բայց, երբ ես նրան բացատրեցի իմ տեսակետը, նա ինձ ճիշտ համարեց:

Ես քաղաքական գործիչ չեմ: Ես դրանից ոչինչ չեմ հասկանում: Ես միայն մի բան գիտեմ. մենք մի կտոր փոքր ու դժբախտ երկիր ունենք, որն արդէն երկրորդ անգամ գրեթէ մեռնում է: Եւ մենք այլ բանի մասին ենք խօսում:

**Նուվէլ դ'Աղմէնի- Մինչդեռ Դուք ցեղասպանութեան խնդրի շուրջ շատ ակտիւ էք եղել, յատկապէս երբ հարցը Սեմատում էր քննարկւում: Դուք եկաք՝ խօսելու Սեմատի առջեւ...**

Շ. Ա. - Եւ դա ինչ տւեց:

**Նուվէլ դ'Աղմէնի- Դուք մասնակցել էք միտինգների...**

Շ. Ա. - Եւ դա ինչի՞ն է ծառայել:

**Նուվէլ դ'Աղմէնի- Դուք սիւնակներ էք տպագրել թերթերում...**

Շ. Ա. - Եւ դա ինչի՞ն է ծառայել: Դա մեզ ո՞ր է տարել: Ի՞նչ աւել բան է դա մեզ տուել: Եթէ հաշուենք մետրերով՝ սկսած մի Ք կէտից, քանի՞ միլիմետր ենք առաջ գնացել: Չրօ:

**Նուվէլ դ'Աղմէնի- Դուք իսկապէս տպաւորութիւն ունէք, որ մենք առաջ չե՞նք շարժւել:**

Շ. Ա. - Չենք շարժւել եւ չենք շարժւի: Երբեք: Ինձ պարբերաբար հրաւիրում են Թուրքիա: Թուրքիայի արտգործնախարարն անգամ ինձ հրաւիրել է արծակուրդս անցկացնելու իր մօտ: Որպէսզի համաձայնութեան գանք, թէ ինչ ենք պահանջելու: Բայց քաղաքական պարտիաներ չխաղանք, մէկի կամ միւսի պարտիզանական հետաքրքրութիւնների համար: Ինձ հետաքրքիր չէ, թէ ով կը լինի Հայաստանի յաջորդ նախագահը: Ես ուզում եմ, որ սահ-

մանը բացւի, եւ այս երկիրը մի փոքր շունչ քաշի:

**Նուվէլ դ'Աղմէնի- Դուք շի՞շ էք նետում ծովի մէջ:**

Շ. Ա. - Այո, ես միշտ լաւ բաներ եմ ասում թուրքերի մասին: Ես կարծում եմ, որ հետաքրքիր ազգ եմ: Թուրքիայում չկայ մի հայ, որ ասի, որ չի սիրում թուրքերին: Չեն սիրում, հաւանաբար, նրանց պահածքը, նրանց քաղաքականութիւնը, բայց ոչ ժողովուրդն ինքնին: Իմ նպատակն է, որ մի փոքր առաջ գնանք:

**Նուվէլ դ'Աղմէնի- Դուք հիասթափուած չէ՞ք 2009-ին Ցիւրիխում ստորագրուած արձանագրութիւնների ձախողումից:**

Շ. Ա. - Դրանք երեկոյեան ստորագրուեցին, բայց յաջորդ օրն իսկ արժէզրկուեցին: Ես հիասթափուած չէի, որովհետեւ կասկածում էի, որ այդպէս էլ կը լինի: Ինչո՞ւ: Թուրքերի հետ ոչ մի պայմանագիր այդպէս էլ չի հաստատուել: Միշտ ինչ-որ պահ է գալիս, երբ կամ նրանք են նահանջում, կամ մենք ոչինչ չենք կարողանում անել: Այս միտմանն այսօր նպաստում է նրանց ռազմավարական դիրքը: Նրանք իրենց ուժեղ են զգում եւ անելի ու անելի քիչ են հակած զինուորների: Ուրեմն, ի՞նչ պէտք է անենք: Ես ցանկանում եմ, որ ոչինչ էլ չանենք: Այլեւս պէտք չէ ինձ վրայ յոյս դնել: Դա ինձ յոգնեցրել է: Ես չեմ ցանկանում իմ ուժերը անիմաստ վատնել:

Թուրքերը մի ազգ են, որոնց հակաճշմարտութիւններ են ուսուցանել: Նրանց սխալ բաներ են սովորեցրել: Մեկնարկենք այն կէտից, որտեղ նրանք են եւ սովորեցնենք նրանց հակառակը:

**Նուվէլ դ'Աղմէնի- Պէտք է խելաքի՞ լինել երկուսի փոխարէն:**

Շ. Ա. - Խելացի մէկ բառով: Ամէն դէպքում պէտք է գործել: Նախածեռութեամբ հանդէս գալ: Ես

իմ հերթին Ձեզ մի հարց եմ տալիս. որքա՞ն ժամանակ են թուրքերն ապրում մեր տարածքներում: Ես չեմ խօսում այն մասին, որ նրանք մեզմից խլել են, այլ դրանից առաջ:

**Նուվէլ դ'Աղմէնի- Դարեր: Սօտաւորապէս 1000 տարի:**

Շ. Ա. - Գերմանացիներն այլեւս չեն պահանջում Էլզաս-Լոթարինգիան, իսկ մենք (նկատի ունի ֆրանսիացիներին - «Յետք») այլեւս չենք մտածում Ռուսիի մասին: Պէտք է զոնէ խելացի լինել: Պէտք է հասկանալ իրերի դրութիւնը: Այս ամէնը վերջացած է: Ես անելի հեռուն կը գնամ: Եթէ անգամ նրանք մեզ վերադարձնեն տարածքները, ո՞վ կը գնայ: Ո՞վ կը գնայ ապրելու այդ տարածքների վրայ: Ոչ ոք: Իրատես լինենք: Խելացի լինենք: Հաշուարկենք:

**Նուվէլ դ'Աղմէնի- Բայց Դուք տպաւորութիւն չունե՞ք, որ հայկական իշխանութիւնները լաւ են տիրապետում խնդրին եւ այս ոլորտում գործերը ճիշտ են առաջ տանում:**

Շ. Ա. - Ես այդ մասին ոչինչ չգիտեմ: Յաջորդ անգամ այդ մասին կը խօսենք իշխանութիւնների հետ: Ես չեմ ուզում առաջ գնալ՝ առանց նրանց կարծիքն իմանալու: Բայց ես գիտեմ, որ նրանց համար առաջնահերթ է սահմանի բացումը: Արտաքին աշխարհն է, որ յենում է բառերի պատերազմի վրայ, իսկ ներսում դրանից տառապում են:

**Նուվէլ դ'Աղմէնի- Ներեցէք, բայց չէ՞ք կարծում, որ Հայաստանի հայերի արտագաղթի հիմնական պատճառը պարզապէս տեղական համակարգն է, որն այդ բնակչութեանը յոյս չի ներշնչում: Եւ դա դեռ առանց հաշի չառնելով պատերազմական վիճակը Դարաբաղում: Ուրեմն այս հար-**

**ցում էլ պէտք է զիջել:**

Շ. Ա. - Այո, այդպէս է: Ոչինչ չենք անում այնտեղ ապրող մարդկանց օգնելու համար: Հակառակը: Ես մաֆիոզների մասին անտանելի պատմութիւններ գիտեմ: Նրանք խժռում են գիւղացիներին իրենց հողերի վրայ: Մաֆիայի այդ անդամներին պէտք է գնդակահարել: Այդպէս այլեւս չի կարող շարունակուել: Ցանկանում էք անդամակցե՞լ մաֆիային: Գնացէք ձեր մաֆիան ուրիշ երկրներում հիմնէք: Շատերը ձեզ կընդունեն: Բայց դա ձեր երկրում մի արէք, սեփական ժողովրդի դէմ մի արէք, Աստոյ սիրում:

**Նուվէլ դ'Աղմէնի- Բայց հայկական հարցի կապակցութեամբ ո՞րն է Ձեր առաջնութիւնը:**

Շ. Ա. - Ես համաձայնութիւն եմ ուզում: Ես ուզում եմ, որ թուրքերը ճանաչեն այն, ինչ տեղի է ունեցել: Ինձ համար միեւնոյն է, ցեղասպանութիւն, թէ այլ բառ: Ի՞նչ կը տայ ինձ նրանց կողմից այդ բառի օգտագործումը:

Ուզում եմ, որ նրանք ճանաչեն ջարդերը: Ժամանակին այդ էին ասում: Ամբողջ աշխարհը խօսել է կոտորածների մասին: Եւ յետոյ յանկարծ, յիսունականներից սկսած, սեւեռուեցին այդ ցեղասպանութիւն բառի վրայ, որը շատ ծանր է ընդունել, եթէ անգամ համապատասխանում է իրականութեանը:

**Նուվէլ դ'Աղմէնի - Ամէն դէպքում:**

Շ. Ա. - Նրանք չեն ուզում ընդունել այն փաստը, որ որոշում էին կայացրել աշխարհի երեսից վերացնել մի ժողովուրդ: Եւ ուրեմն պէտք չէ մոռանալ, թէ ինչ է տեղի ունեցել: Բայց պէտք է գնալ դէպի յոյսը:

Սահմանի թուրքերը հայերին դէմ չեն: Դիարբեքիի քաղաքապետը բացայայտ կերպով ասել է, որ այդ ճանաչումը պէտք է տեղի

ուներնայ: Նշանաւոր մարդիկ կան, որ հետաքրքիր բաներ են ասում: Բայց, անշուշտ, կան նաեւ հակառակն ասողներ: Բայց թուրք ժողովուրդը շարժուում է: Նա շարժւեց Յրանտ Դինքի յուղարկաւորութեան համար:

**Նուվէլ դ'Աղմէնի - Իսկ Ղարաբաղի առումով ինչպէ՞ս էք տեսնում իրերի դրութիւնը: Մանաւանդ որ վտանգ կայ թէ այս կողմից եւ թէ Թուրքիայի: Ի՞նչ խոհորուդ կը տայիք Դուք:**

Շ. Ա. - Սա համալիր ծրագրի մաս է: Դա նորմալ է: Պէտք է առնուազն յստակ լինել. արդեօք Ղարաբաղը պատկանո՞ւմ էր Ադրբեջանին մինչեւ Ստալինի կողմից այն նրանց նւիրելը: Արդեօք Ղարաբաղը, այնուամենայնիւ, Յայաստան է: Ոչ, այն ինքնիշխան երկիր է: Դա այդպէ՞ս է, թէ՞ ոչ:

**Նուվէլ դ'Աղմէնի - Այսինքն, այստե՞ղ էլ պէտք է հրաժարուել հետագայ փորձերից:**

Շ. Ա. - Ոչ: Պէտք է ընդունել, որ Ղարաբաղը այնպիսի պետութիւն է, ինչպիսին կայ: Անկախ, ինչպէս Ադրբեջանը եւ Յայաստանը: Ես ուտոպիստ եմ:

**Նուվէլ դ'Աղմէնի - Դուք համաձայնեցնու՞մ էք Ձեր նման դիրքորոշումները հայկական իշխանութիւնների հետ:**

Շ. Ա. - Երբ ես քննարկում եմ հայկական իշխանութիւնների հետ, ինձ միշտ ասում են, որ ես իրաւացի եմ: Բայց նրանք ոչինչ չեն անում: Նոյնը՝ Ֆրանսիայում: Հնարաւոր չէ խօսել իշխանութիւնների հետ: Ինչպիսին որ նրանք լինեն:

Ես չեմ հաւատում, որ Ֆրանսիան մեզ համար որեւէ բան կանի: Դա ոչնչի չի ծառայում: Թուրքիան շատ կարեւոր է Ֆրանսիայի համար: Չենք կարող դա անտեսել: Ֆրանսիայում միշտ իրենց ամեմաւժեղն են ձեւացնում, բայց

ընտրութեան պահին տարբեր է: Ֆրանսիան ոչինչ չի անի հայերի համար: Ահա սպասման 90 տարիները: Գրքեր են գրւել, տարբեր տեսակի մարդիկ են արտայայտւել՝ ի պաշտպանութիւն հայկական հարցի, եւ դրանից ոչինչ դուրս չի եկել:

Եւ դուք այսօր հրաշք էք սպասում, այն պարագայում, երբ բացառիկ խաղադրոյքներ կան, որոնք մարտնչում են դրա դէմ: Կարելի է ուտոպիստ լինել, բայց պէտք չէ չափազանց երազկոտ լինել: Ես չեմ երազում: Իմ կեանքն ապացուցում է, որ ես չեմ երազել: Ես աշխատել եմ: Ես քաղաքական գործիչ չեմ: Ես ոչ խելամտութիւն ունեմ, ոչ կուլտուրա՝ ասելու համար այն, ինչ հաստատում եմ: Բայց ես դա անկեղծ եմ ասում, որովհետեւ այդ եմ մտածում:

**Նուվէլ դ'Աղմէնի - Դուք միշտ հետաքրքրու՞մ էք քաղաքականութեամբ:**

Շ. Ա. - Ես հետաքրքրում եմ քաղաքական այրերով եւ քաղաքական կին գործիչներով՝ սպասումով տեսնելու, թէ ինչ են նրանք անելու: Խոստումներ, խոստումներ: Երէկ ես հիւրընկալում էի իմ ընկեր Բեսանսենոյին: Ես յարգում եմ նրան: Ես սիրում եմ նրան: Նա անկեղծ է: Նա գիշերներն է աշխատում իր թղթապանակների վրայ: Այլոց մասին ես ոչինչ չգիտեմ: Նրանց ելոյթներն ուրիշներն են գրում:

**Նուվէլ դ'Աղմէնի - Դուք աւելի շուտ գո՞հ էք այս վերադարձից:**

Շ. Ա. - Ես ուրախ եմ: Ես շատերի ամբարտաւանութիւնը կտորեցի: Նրանք, ովքեր վատ էին գրում, ժամանակ առ ժամանակ նորից փոքրիկ «բայց»-եր են դնում, բայց աւելի պակաս ընդգծւած: Նրանք ինձ երբեք չեն ների վերադառնալու համար: Մահը ինձ կը ներեն: Բայց ես պատրաստ չեմ մեռնել: Լաւ լսէք ինձ, Արա: Ես

ուզում եմ, որ այնտեղ՝ երկրում, որն արդէն մեռնելու վրայ է, իմ ժողովրդի համար մի բան տեղի ունենայ: Որքա՞ն են այնտեղ: Ինձ ասում են՝ 2,3 մլն: Իշխանութիւնները մատնացոյց են անում 3,6 մլն: Բայց դա ճիշտ չէ:

Շատ կարճ ժամանակում նրանց թիւը կը դառնայ 1 մլն 800 հազար: Եւ կիջնենք մինչեւ 1 մլն բնակչութիւն՝ մաֆիոզների ձեռքում: Այդ պարագայում պէտք է յոյսներս չինացիների վրա՞ դնենք երկիրը վերաբնակեցնելու համար:

Ես կուզեմայի, որ իւրաքանչիւր հայ ինքն իրեն հարց տայ. ի՞նչ նպաստ եմ ես բերում իմ նախնիների երկրին: Ի՞նչ եմ ես տալիս՝ մերժելով այս մէկը, չընդունելով այս միւսը: Եւ ինքն իրեն հաշիւ կը տայ, որ ոչինչ էլ չի տալիս: Ինչպէս Դուք տեսնում էք, ես ասում եմ այն, ինչ մտածում եմ:

**Նուվէլ դ'Աղմէնի - Իրականում Ձեր ցանկութիւնը հայերին օգնե՞լն է:**

Շ. Ա. - Պէտք է նրանց օգնել, թուրքերին նոյնպէս: Մեր միջուկ դա պէտք է լուծի, որոշի, եթէ մենք կամքի տէր մարդիկ ենք:

**Նուվէլ դ'Աղմէնի - Բայց հայե՞րը, Դուք մի փոքր գրեթէ կողոպտում էք նրանց, այնուամենայնիւ: Դուք Ձեզ հաշիւ տալի՞ս էք:**

Շ. Ա. - Ես իմ կեանքն անցկացրել եմ հասարակութեանը կողոպտելով: Եւ մերոնց հետ նոյնը չե՞մ անի: Մի օր իմ քոյրն ինձ ասաց. «Դու հաւատու՞մ ես, որ թուրքը կարող է քեզ սպանել»: Հայը նոյնպէս կարող է դա անել, նոյն պատճառներով: Ես ռիսկի եմ գնում: Ես այսպէս եմ տեսնում իրողութիւնները: Վնա՞ս եմ կրում: Գուցէ: Բայց թող ինձ մի լուծում ցոյց տան: Ոչ թէ բողոքներ: Եւ յետոյ՝ առանց տաբուների. ես մի օր ՀՀ նախագահի հետ խօսեցի իսլամացած հայերի խնդրի մասին՝

# ՅՈՒՍԱԽԱՐ ԵՒ ՎՃՏԱՀԱՐ ԵՆՔ ԱՁՆԱԴՈՒՐԵՆ

Հայկ Նազգաշեան

ասելով, որ մի բան պետք է անել: Ամեն կողմից լքած այս մարդիկ դժբախտ են: Պէտք է նրանց օգնել:

Մենք իսլամին դեմ չենք: Հայաստանում մենք 6 հրաշալի մզկիթ ունենք, որոնք փրկել են չնայած Ստալինի հրամանին, ով ուզում էր դրանք ոչնչացնել: Իրանն անում է անհրաժեշտը դրանք վերանորոգելու համար:

Մենք ազգ ենք: Ազգը բաղկացած է ամեն տեսակի մարդկանցից՝ լաւագոյններից մինչեւ վատագոյններ, եւ ամեն կրօնի դաւանող: Նորմալ է, որ ունենք քրիստոնեաներ, հրեաներ եւ մուսուլմաններ: Հայաստանը պէտք է այս ուղղութեամբ ընթանայ, որով գնում է նաեւ Եւրոպան:

## Նուվէլ դ'Ադմենի - Դուք ճանաչել էք Հայաստանի երեք նախագահներին: Կարո՞ղ էք մեզ նրանց մասին պատմել:

Շ. Ա. -Ոչ, դա իմ գործը չէ: Նրանք բարի կամքի տէր մարդիկ են: Բայց երբեմն իրավիճակները փոխում են կամքը: Ամեն դէպքում, նախագահներից ոչ մէկը ինձ երբեւէ «ոչ» չի ասել: Միգուցէ ես կը նախընտրեի, որ ինձ դա ասէին:

Արա, այսօր ի՞նչ է նշանակում լինել հայ: Ես կուզեմայի դա իմանալ: Ի՞նչ է նշանակում սփիւռքահայ: Լաւ ուտե՞լ: Լաւ խմե՞լ: Ունենալ սեփական բուտիկ եւ խօսել ցեղասպանութեան մասի՞ն: Դա՞ է հայ լինելը: Սա շատ քիչ է:

Հարցազրոյցը՝  
Արա Թորանեանի  
Ֆրանսերէնից թարգմանութիւնը՝  
Լիանա Սայեադեանի  
Նոյեմբեր 4, 2011



Շատ դժուար, տառապալից պարտականութիւն է գրել մէկու մը դէմ, որուն հանդէպ սեր, յարգանք եւ գնահատանք ունեցած էի մինչեւ այն պահը, երբ ան իր նոր արտայայտութիւններով յուսախաբուեցին եւ վիշտ կը պատճառէ: Աշխարհահռչակ երգիչ Ազնաւուր վերջերս հարցազրոյց մը ունեցած է «Նուվէլ տ'Արմենիէ»-ին հետ, ուր կ'ըսէ, թէ իրեն համար շատ ալ կարեւոր չէ ցեղասպանութիւն կոչել 1915-ին սկսած եւ մինչեւ 5-6 տարի շարունակուած ջարդերը, որոնք Օսմանեան Թուրքիոյ պետական որոշմամբ ու հրահանգով գործադրուեցան Արեւմտեան Հայաստանի մէջ եւ որուն հետեւանքով իր դարաւոր հայրենիքին մէջ ապրող շուրջ երեք միլիոն հայութեան 1.5 միլիոնը բնաջնջուեցաւ, ներառեալ նաեւ Պոլիս ապրող աւելի քան հարիւրեակ մը գրագէտներն ու քաղաքական գործիչները:

Յարգելի Ազնաւուրին հարց կու տամ, եթէ այս բոլորը ցեղասպանութիւն չէ, գտա՞՞ծ է զայն փոխարինող բառը: Եթէ ոչ՝ հարկ է, որ պահենք, պահպանենք այդ բառը, որուն նմանը չկայ, եւ չկայ

ջարդ ու կոտորած, որ հաւասարի հայկական ցեղասպանութեան: Ան կը յիշատակէ տարբեր ժողովուրդներու ջարդերը, գլխաւորութեամբ հրեական հոլոքոսթին, զոր ծրագրող եւ գործադրող Նացի Գերմանիոյ յաջորդող կառավարութիւնը ներողութիւն խնդրեց զոհէն, միւթական ու բարոյական հատուցում կատարելով: Եւ հատուցումներուն գլխաւորը՝ 1948-ին, ՄԱԿ-ի որոշումով, հիմնուեցաւ Իսրայէլի պետութիւնը, մինչ հայոց թիզ մը հող իսկ չէր տրուած:

Ազնաւուր օգտակար կը նկատէ Հայաստանի եւ Թուրքիոյ սահմանին բացումը, խորհելով թէ Թուրքիոյ մեղրն ու կարագը դէպի Հայաստան հոսելով կը բարելաւուի ժողովուրդին կենցաղը: Բացարձակապէս սխալ այս կարծիքէն պէտք է հրաժարի ան, համոզուելով որ սահմանի բացումը միայն չարիք կը բերէ հայ ժողովուրդին, նոյնիսկ վտանգելով հայ պետութեան գոյութիւնը: Դժուար չէ երեւակայել, որ բաց սահմաններէն քանի մը հարիւր հազար թուրքեր Հայաստան գան, գործի ձեռնարկեն, տուն գնեն, հայ կիներու հետ կենակցին եւ նոյնիսկ ամուս-

նանալով խառնածին սերունդ մը յառաջ բերեն: Այս ահաւոր պատկերին հետեւանքով տունը ծախող հայը պիտի չուէ օտար երկիր՝ այդ կտոր մը հայրենիքին ալ ապագան վտանգելով: Աչքի առջեւ է օրինակը բարեկամ իրանցիներուն, որոնք Հայաստան գալով տուներ գնեցին, հաստատուեցան եւ գործերու ձեռնարկեցին:

Սակայն բարեկամական այս ընթացքը անուղակիօրէն վնասակար եղաւ, քանի որ տունը ծախող հայը տնտեսական եւ քաղաքական անտանելի կացութենէն զզուած եւ կանխիկ դրամը գրպանը դրած՝ լքեց հայրենիքը: Որով, սահմանները բանալ առաջարկող Ազնաւուր այս աղէտալի կացութեան մասին ալ պիտի մտածէ:

Ազնաւուր թուրքերը լաւ մարդիկ կը նկատէ, կ'ուզէ թուրքիա այցելել, վայելել երկրին գեղեցկութիւնը եւ խոհանոցին համադամները: Ես գացեր ու վայելեր եմ այդ բոլորը՝ մեր մայրերու տուժան, սարման եւ քեօֆթէն եւ թուրք ժողովուրդին սիրալիկ խօսակցութիւնը:

Իր ուշադրութեան կը յանձնեն նաեւ թուրք նպարավաճառի մը հետ ունեցած հանդիպումս շուրջ քառասուն տարի առաջ: Սեփական ինքնաշարժովս Պէյրութէն ճամբայ ելեր էի կնոջս եւ 4-5 տարեկան տղուս հետ, քշելու համար մինչեւ Փարիզ: Ատանա հասնելով նպարավաճառի մը խանութին առջեւ կեցայ գնումի համար: Մինչեւ մէջքը հասնող ճերմակ մօրուք ունէր նպարավաճառը: Սահուն թրքերէնով հարցուցի, թէ այստեղ հայեր կ'ան:

Ապշած՝ երեսիս նայելով վերէն վար չափեց զիս եւ պատասխանեց.- Օղլո՛ւմ, սէն ճահիլ սըն. վախտընտա չոխ վարտըլար, քեօթիւնտէն թեմիզլետիք (տղաս, դուն պզտիկ ես. ժամանակին շատ կային, արմատէն մաքրեցինք) ըսաւ ան, ձեռքը եաթաղանի պէս օդին մէջ փարտելով: Ասի-

կա թուրքին հարազատ պատկերն էր, որովհետեւ ան չէր գիտեր հայ ըլլալս: Յաջորդ տարին, քանի մը բարեկամ ընտանիքներու հետ կրկներ եմ նոյն պտոյտը, իմիջիայլոց, աւելի լաւ ճանչնալու համար թուրքն ու թուրքիան:

Ազնաւուր հիմա ինքնակոչ հիւր մը չէ: Ան հրաւիրուած է թուրքիոյ արտաքին գործոց նախարարէն: Խորամանկ մարդ է Տաւուտօղլուն. ան գիտէ թէ ո՛վ է Ազնաւուր, ի՞նչ կշիռ ունի, ի՞նչ կ'ուզէ եւ հասկացողութեան գալու անոր կակուղ տրամադրութեան մասին ալ տեղեակ ըլլալու է: Բայց իրեն տրուելիք փառք ու պատիւներէն անդին, Ազնաւուր պէտք է մտածէ, թէ ի՞նչ կրնայ փրցնել ի շահ ազգին, թեւ կը կարծեմ՝ թէ ոչինչ:

Ազնաւուր առաջինը չէ, որ թուրք նախարարի մը պիտի հանդիպի: Այդպիսի առաջին հանդիպումը տեղի ունեցաւ 27 Նոյեմբեր 1977-ին Ցիւրիխի մէջ, թուրք արտաքին գործոց նախարար Սապրի Չաղլայանկիլի եւ սփւռքահայ երեք կուսակցութիւններու ներկայացուցիչներու միջեւ: Այս հանդիպումը մանրամասնօրէն ներկայացուած է «Խճանկար» գրքէն 392-393 էջերուն վրայ, ուր թուրք նախարարը պաշտօնապէս կը յայտարարէ.-

1) Ոչ մէկ թուրք կառավարութիւն կրնայ մէկ թիզ հող իսկ զիջիլ:

2) Ձեր ցեղասպանութիւն կոչածը անցեալի ցաւալի դէպքեր են, որոնց ընթացքին հայեր եւ թուրքեր զիրար ջարդեցին:

Բայց զարմանալի անկեղծութեամբ կամ պատմութեան պարտադրանքով կ'ընդունի, թէ հայկականը անհատական կամ խմբակային էր, մինչ թրքականը պետականօրէն կազմակերպուած էր:

Վերջ տալու համար Հայոց Ցեղասպանութեան մասին պնդումներուն, Չաղլայանկիլ անսահման միւթական հատուցում կ'առա-

ջարկէ, պահանջելով նաեւ ԱՍԱԼԱ-ի գործունէութեան դադարումը, այլապէս սպառնալով թրքական փոխադարձութեամբ, որ աւելի բուռն կրնայ ըլլալ, կ'ըսէ ան:

Հայ պատուիրակութիւնը կը պատասխանէ, թէ հայոց մարդկային ու հողային կորուստները միւթական հատուցումով չեն լուծուիր, իսկ ԱՍԱԼԱ-ի վրայ ոչ մէկ հակակշիռ ունին կուսակցութիւնները, նկատելով որ անոր անդամները կուսակցութիւններու խաղաղ եւ դասականացած գործունէութենէն դժգոհ տարրեր են: Այս առթիւ պէտք է յիշել, որ ԱՍԱԼԱ-ի (ASALA= Armenian Secret Army for the Liberation of Armenia) հիմադիրը եղած է Գուրգէն Եանիկեանը, որ Լոս Անճելըսի թուրք հիւպատոսարանին մէջ երկու թուրք դիւանագէտներ սապաններ յետոյ, կամաւոր կերպով յանձնուեցաւ ոստիկանութեան եւ բանտին մէջ մահացաւ տարիներ ետք:

Այս դէպքին շնորհիւ, մասնաւորաբար ցեղասպանութեան ճանաչման համար մղուող պայքարը նոր թափ ստացաւ եւ դեռ կը շարունակուի:

Եզրակացութիւն՝ չեն կարծեր որ Ազնաւուր ինքզինք աւելի լիազօրուած զգայ քան կուսակցութիւնները, ազգային որեւէ հարցի առնչութեամբ:

Լուսաբանութեան համար տրուած այս ծանօթութիւններէն յետոյ, կը խնդրենք սիրելի Ազնաւուրէն, որ քաղաքական մարզի մէջ բանակցողի հանգամանքէն հեռու կենայ, գոհանալով վաստակաւոր աշխարհահռչակ երգիչի իր համբաւով, որուն համար հպարտ ենք եւ շնորհակալ ենք իրեն ազգովին:

Մոնթրէալ, Գանատա


# Wikipedia-ն ՀԱՅԵՐԵՆՈՎ\*

Կոլիա Տեր Յովհաննիսյան

Թերեւս երբեք չէի անդրադառնայ այս թեմային, եթէ էջմիածնում բնակւող երիտասարդ բարեկամուհուս հետ չունենայի ինտերնետային հետեւեալ երկխօսութիւնը, որի որոշ տողերը, անկեղծ ասած դիպան ազգային արժանապատւութեանս: Ինձ զարմանք պատճառեց նաեւ այն հանգամանքը, թէ ինչո՞ւ մեր պետական այրերը կան տեղեկատուական մասնաւոր ձեռնարկութիւնները մինչեւ այժմ չեն խորհել այս կարեւոր խնդրի մասին: Գուցէ՞ գիտեն ու լռում են կամ բաւարարում եղածով:

...Երէկ որոշեցի մի գիտական յօդած թարգմանել ու տեղադրել հայերէն Վիքիփեդիայում: Գիտե՞ս, հայերէն Վիքիփեդիան սարսափելի աղքատ է եւ դա ինձ լուրջ մտահոգում է, որովհետեւ այս դարում պետութիւնների ուժը, հաստատ, ինտերնետում ըստ իրենց ներկայութեան տարածածութեամբ է չափելու, իսկ դա էլ իր հերթին որոշելու է լեզվի տարածածութեամբ:

-Ըստ իս, լեզվի տարածածութիւնը կապւած է այդ լեզուով խօսող ժողովրդի քանակի հետ: Հայերը հազիւ 10 միլիոն են աշխարհում, կէսից աւելին՝ կիսահայեր, որոնք հայերէն չգիտեն: Ուստի ակնկալել, որ Ուիքիփեդիայում հզօր լինենք, առնազն երազային ցանկութիւն է: Յետոյ, ասենք՝ եղանք, ո՞վ է կարդում, երբ դրա կողքին կան անգլերէնը (մեզ համար) եւ ռուսերէնը (ծեգ համար): Ինչեւէ ողջունելի է, եթէ այս ուղութեամբ մտածում ես եւ պատրաստում յօդած թարգմանել միայն, յուսով եմ, որ գիտական տերմինները հայերէն դարձնելու ճիգը չխոչընդոտի այս գործին. Բոլորը խօսելիս էլ ասում են



«Ֆայլ», կամ «չաթ», չեն ասում «գործ», կամ «ինտերնետային գրոյց»:

-Լեզվի տարածածութիւն ասելով նկատի չունեն այդ լեզուով խօսողների թիւը, այլ՝ այդ լեզուով ռեսուրսները ինտերնետում. այս ուղղութեամբ որքան շատ աշխատենք տանենք, այնքան կը նպաստենք հայերէնի ու ՀՀ -ի հզօրացմանը, դրանում վստահ եմ: Սա բնաւ էլ երազային չի. ճիշտ է, չենք կարող կարճ ժամանակում միլիոնին մօտ յօդածներ ունենալ, բայց կարող ենք չէ՞ գոնէ չզիջել վրացերէնին, քրդերէնին կամ ադրբեջաներէնին: Ինչ վերաբերում է տերմինների թարգմանութեանը, մտքովս էլ չի անցնում, օրինակ, *ֆայլ* բառը թարգմանել, բայց կան ոչ այնքան մեղ-մասնագիտական բառեր, աւելի ճիշտ՝ բառապաշար, որի հարցը շատ դժուար է ու լուրջ»:

Բանից պարզւում է, որ նշած երեք լեզուներով Ուիքիփեդիա-

յում աւելի շատ յօդածներ կան, քան հայերէնով: Եւ սա այն պարագային, երբ հայերը պատկանում են քսան հատորանոց հանրագիտարան ունեցող քիչ երկրների թւին: Այլ խօսքով դարերի խորքից եկած ու մշակոյթի կենտրոն հանդիսացող Հայաստանը այս բնագաւառում յետ է մնացել նոյնիսկ քրդերից: Այստեղ էր, որ ազգային ջիղս թրթռաց... ու չզիտեն պարզապէս հակաճառելու, թէ ինձ մխիթարելու համար գրեցի.

- Չեմ ասում, որ մնում են նախկին կարծիքիս, բայց չեմ հասկանում, թէ ինչու դրանով կը նպաստենք հայերէնի ու ՀՀ հզօրացմանը: Իսկ քո ճիգի մասին տողերդ կարդալով յիշեցի «Գեւորգ Մարգարտունի»-ի մէջ «Մի ծաղկով գարուն»-ը: Ապրես, բայց նման մի մեծածախ աշխատանքի իրագործման համար պահանջւում են պետական լծակներ եւ հովանաւորութիւն»:

# ՀԱՐՑԱԶԻՐՈՅՑ «ՀԱՄՇԷՆԸ» ԳՐՔԻ ՀԵՂԻՆԱԿ ՅՈՎԱՆ ՍԻՄՈՆԵԱՆԻ ՀԵՏ

Արմինե Մելիք - Իսրայելեան


- Ես համոզուած եմ, որ վաղը-միւս օրը, երկրի հզօրութիւնը որոշելու առաջնային ցուցանիշերից մէկը համաշխարհային սարդոստայնում նրա տարածածութիւնն ու հզօրութիւնն է լինելու: Իսկ երկրի տարածածութիւնը ուրիշ բան չէ, քան՝ լեզւի տարածածութիւնը...

Չգիտեմ, որքանով է իրաւացի բարեկամուհիս, բայց զուր չէ, որ նոյնիսկ փոքր ազգերը աշխատում են այս ուղղութեամբ ու հասել են բաւարար արդիւնքների: Պետական լծակներ ասելով՝ նկատի ունեն Գիտութեան ու Կրթութեան նախարարութիւնը, Մշակոյթի նախարարութիւնը, ՀՀ Ակադեմիան եւ նման կառոյցներ: Դժար չէ կեանքի կոչել մի կազմակերպութիւն, որը կը գլխաւորի անգործ մնացած հմուտ թարգմանիչների եւ գիտնականների մի խումբ՝ մնայուն աշխատանք ապահովելով նրանց համար: Այս օրերին մեծապէս կարելորում է տեղեկատուական տեխնոլոգիաների զարգացումն ու տարածումը Հայաստանում. ինչո՞ւ լրջօրէն չնտածել նաեւ մեր հիասքանչ հայերէնի միջազգային տարածածութեան ուղղութեամբ:

Չեմ խորանում միութեան թնջուկի մէջ, քանզի դա դուրս է այս գրութեան սահմաններից. այնուամենայնիւ, նկատի ունենալով տւեալ գործընթացի անհետաձգելիութիւնը, պետական բիւջէին համընթաց, պէտք է ներգրաւել մասնաւոր հովանաւորողներ կամ հիմնադրամներ, որպէսզի հնարաւոր լինի ապահովել մեր երկրի ապագայ հզօրութիւնն ու ազգերի ընտանիքում՝ մեր հեղինակութիւնն ու պատւաւոր տեղը:

Նոյեմբեր, 2011  
Թեհրան

\* Ցանկալի է, որ հայ մամուլը Հայաստանում եւ Սփիւռքում արտատպի այս գրութիւնը («Յոյս»):



Ազգային պատկանելութեան, ինքնութեան հարցերը մշտապէս եղել եւ մնում են ուսումնասիրողների ուշադրութեան կենտրոնում, որպէս գիտական հետազօտութիւնների աղբիւր այս կամ այն ազգի գոյութեան ընթացքն ու կենսագրութիւնը ներկայացնող պատմաքաղաքական միւթ, որը դուրս է ժամանակավրէպութիւնից...

Արմենոիդ մարդաբանական տիպին պատկանող հայ ազգի պարագայում ուսումնասիրողները նրա գոյութեան ընթացքը ուսումնասիրելով կորսած եւ տակաւին կորսող մարգարտահատիկներ հաստատ կը գտնեն... Այդ է վկայում շէյջարաբնակ հայ երիտասարդ պատմաբանի Յովան Սիմոնեանի ուսումնասիրութիւնը:

Երիտասարդ գիտնականի, պատմաբանի ու տնտեսագէտի կենսագրութեան արմատներն հազարաւոր հայ ընտանիքների

ճակատագրի նոյնանուն աղերսն ունեն պատմական ցաւի՝ 1915-ի հայոց ցեղասպանութեան հետ:

Սասունից Այնթապ ու այնուհետեւ փրկութեան յոյսով Հալեպ ապաստան գտած ջաղացական Օւլէն՝ Յովհաննէսը ջարդից մազապործ եղած միակ մարդն էր իր մեծ գերդաստանից, որ բախտակից կիլիկիացի աղջկայ հետ ամուսնանալով հայկական միստ ու կացով ու հայի ինքնութիւնը պահպանած սերունդ տւեց օտար ափերում, օտար քաղաքակրթութեան ներսում պահպանելով սեփական դիմագիծը: Հալեպում հաստատուած փուռապան Օւլէի պատւին նրա բոլոր տղայ թոռները կրեցին պապի անունը, Յովհաննէս անուն համարժէք անուններով՝ Յովիկ, Ժան, Յովան...

Սասունցիները յայտնի էին, որպէս հացագործներ, որոնք արտագնայ աշխատանքի էին մեկնում այլ վայրեր ու երկրներ եւ յարգի էին որպէս այդպիսիք:

Նոյնիսկ Հայկապոլսում սասունցիներին *սուսանի* էին անւանում, որը արաբերէն նոյն հացագործ բառն է, - ասում է Սասունի, Կիլիկիայի, Այնթապի արմատներ կրող շէյ-ցարաբնակ երիտասարդ պատմաբան Յովան Սիմոնեանը, ում աշխատութիւնն ու ուսումնասիրութիւնների շրջանակը բաւականին հետաքրքիր առանցք ունի, դէպի պատմական հայրենիքի դաւանափոխ ու ծպտեալ հայերը...

-1975 թականին, երբ սկսեց պատերազմը թողնելով Լիբանանը հաստատուեցինք Շէյցարիայում: Ուսումնառութիւնս ստացայ Լոզանի համալսարանում՝ տնտեսութիւն եւ բիզնէս մասնագիտութեամբ: Պատմաբանութիւնը իմ հորբիս է եղել, անչափ շատ էի սիրում, բայց արգիլւած էր, քանի որ հօրեղբայրս պատմաբան էր, գրող, լրագրող եւ երբեք դրամ չահած չէր ու միշտ հայրս էր հոգում իրեն, ադոր համար չէր ուզած, որ իր զաւակները այդ ճանապարհով գնան, - ասում է Յովան Սիմոնեանը, ում հետաքրքրութիւնն ու սէրը, մասնագիտական խորը պատրաստածութիւնն ու գիտելիքները պատմական միջոցների ուսումնասիրութիւնների մէջ տւեցին իրենց լուրջ արդիւնքը:

**«ՀԱՍՇԵՆԱՅԱՅԵՐ. ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՆՔՆՈՒԹԻՒՆ ՀԻՒՍԻՍ ԱՐԵԻԼԵԱՆ ԹՈՒՐՔՈՅ ՄԷՏ», այսպէս էք անւանել Ձեր ուսումնասիրութիւնը նկրւած համաշէնահայերին, որը բաւականին հետաքրքիր է նրանով, որ յենւած է կենդանի շփման ու պատմական միութի, տարբեր աղբիւրների եւ սեփական ուսումնասիրութեան հիման վրայ: Պարոն Սիմոնեան, ինչպէ՞ս ծնեց համաշէնահայերին նկրւած նման աշխատութիւնը գրելու ցանկութիւնը:**

-Առաջին անգամ իսլամացած հայերու՝ համաշէնահայերու մասին

տեղեկացայ ֆրանսիացի լեզւաբան Ժորժ Դիւմէլիի 60-ականներին Ֆրանսիայի հայագիտական հանդէսում տպագրւած մի յօդուածից, որ համաշէնահայ մի տղայի հետ շփուելով պարզած էր, որ այդ տղան անտեղեկ է իր ինքնութեանը, չնայած խօսում էր համաշէնահայ բարբառով: Նա չգիտէր, որ իր խօսածը հայերէն է, քանի որ իրենք պարզապէս հեմշինի լեզու կըսեն: Նա լուր չուներ, որ հայի ծագում ունի, միայն, երբ ծով կերթար, Պոլսում նման մարդոց կը հանդիպէր, որ նոյն խօսւածքն ունէին, բայց չգիտէր, որ պոլսահայեր էին...

Այդ պատմութիւնն ինձ ցնցեց, հետաքրքրեց, որ այդպիսի ժողովուրդ կայ, որ հայերէն են խօսում, իսլամացած են եւ լուր ալ չունին, որ հայ են...

Երկրորդ աղբիւրը սովետագետ Ալեքսանդր Բենիքսենիցն էր, որը կը զբաղէր սովետական միութեան ժողովուրդներու արմատներով: Նրա գրքերից մէկը սովետ միութեան մէջ եղած մահմեդական ազգերու մասին էր, ուր յիշատակւած էին նաեւ համաշինները, որոնք հայ մուսուլմաններն էին: Հեղինակի բերած պատմական փաստերը խօսում էին Ստալինեան ռեժիմի տարիներին կատարւած ազգային փոքրամասնութիւնների արհեստական տեղաշարժերի մասին: Ստալինը թուրք մեցիսթներուն եւ հեմշիններուն տեղահանեց դէպի կենտրոնական Ասիա... Այս պատմութիւններն էին, որ միտքս գրաւեցին եւ 1998-թականի ամռանը մի խմբով մեկնեցինք Համաշէն, երեք շաբաթ հոն անցուցինք, կարելոր տեղեկութիւններ հաւաքեցանք այս հայերու մասին: Ես տեղեկ էի գերմանացի ուսումնասիրողի՝ Բենիքսաուսի աշխատութիւնէն, որ համաշէնահայերը երկու խմբի են բաժանուում: Մէկ խումբը նրանք են, որ թուրքիոյ մէջ կապին եւ հայերէն չեն խօսում, իրենց յատուկ թրքական բարբառը ունին, որի մէջ

շատ հայկական բառեր կան, դրանք արեւմտեան համաշէնահայերն են: Երկրորդ խումբը, որ հայախօս է Հոմիայի նահանգում են բնակուում, իսկ կենտրոնական Հեմշինը Ռիզէի նահանգում է գտնուում: Երբ Համաշէնից վերադարձայ ինձ հետ կապուեց անգլիացի հրատարակիչ մը, որ գիտական եւ պատմական գրքերու հրատարակութեամբ զբաղող հրատարակչութիւնում կաշխատէր ասաց, որ նախկին սովետմիութեան եւ Կովկասի ազգերու մասին գրքերու շարք մը կը հրատարակեն, որոնց մէջ հատոր մը պէտք է համաշէնահայերու մասին պէտք է ըլլայ եւ իմանալով, որ ես նման ուսումնասիրութիւն ունեմ ինձ առաջարկեցին այդ գործը:

**-Ազգային պատկանելութեան ինքնութիւնն ու գիտակցումը կորցնող կամ յայտնի պատճառներով շատ խորը թաքցած, հենց պատմական հայրենիքում ապրող այս հայերի մէջ կրօնական կամ ազգային սովորոյթները արդեօք պահպանե՞լ էին... Ի՞նչ տպաւորութիւն էր, ո՞ւմ հետ էիք շփուում, ինքնութիւնը կորցրած ցեղի՞, թէ՞ դաւանափոխ կամ ծպտեալ հայի հետ...**

-Կրօնով մուսուլման են, բայց պահպանած էին հայկական տօներէն Վարդավառը, որուն իմաստը եւ ծագումը չիմանալով կը տօնին եւ կը կարծին թէ համաշէնական սովորութիւն է: Եւ մէկ տօն էլ ունեն, որ կապուած է խոտհարքին հետ, քանի որ մեծ մասամբ գիւղական վայրերում ապրողները զբաղուում են անասնապահութեամբ:

Առաջին իսկ շփումից զգացուում է, որ համաշէնահայերու մեծամասնութիւնը ուրանում է իր հայ լինելը: Մի մասը այդ անում է գիտակցաբար, որ թուրքերու մէջ չիմանան թէ իրենք հայ են, քանի որ թիւրքիոյ մէջ շոփնիզմ ըսւածը արմատախիլ ըրւած չէ տակաւին եւ եթէ հայ

ես ուրեմն քրիստոնեայ ես, հասկացողութիւնը կայ, ինչպէս որ, եթէ թուրք ես, ուրեմն մուսուլման ես... Միւս մասն էլ, պարզապէս չգիտեն իրենց ինչ ազգից ըլլալը, քանի որ ծնողքը գիտնալով իրենց չեն ըսած եւ մէկ ուրիշ մտայնութեամբ առաջնորդողներ ալ կան, որ գիտեն, բայց թաքցնում են իրենց ծագումը: Հայ ըլլալու հանդէպ վերաբերմունքը կապ ունի իրենց քաղաքական դիրքերի հետ: Եթէ աջակողմեան են կուսակցութիւններու կը հետեւին եւ աւելի ազգայնամոլ թուրք են, ուրեմն անշուշտ ուրանում են հայութիւնը: Եթէ ձախակողմեան են ընդունում են հայկական արմատները: Երիտասարդներու մէջ մեծ է հետաքրքրութիւնը դէպի իրենց արմատները: Կայ նաեւ գեոդերային տարբերութեան խնդիր, կանայք, ծերուկ մամիկները իրենց հայութիւնը արմատներից տեղեակ են, այսինքն չեն ուրանում, բայց տղամարդիկ՝ մինչեւ 60 տարեկանները ուրանում են, բանակ գնացածները մանաւանդ, որոնք քարոզներով աւելի ուղեղի լւացում են ստացել:

**- Այդուհանդերձ ներկայանում են որպէս համշէններ, խառնամուսնութիւններ եւս տեղի՞ են ունենում նրանց եւ թուրքերի միջեւ:**

-Համշէնում խառնամուսնութիւններ չկան, քանի որ գիւղերում շատ քիչ են երիտասարդները: Երիտասարդ ընտանիքները 1960 թականին գաղթած են դէպի Թուրքիոյ մեծ քաղաքները՝ Անկարա, Իզմիր, Ստամբուլ... Այդտեղ, անշուշտ շատ են խառնամուսնութիւնները միւս թուրքերու հետ: Համշէնահայերի մեծամասնութիւնը ապրում է հիմնականում վերը նշած մեծ քաղաքներում եւ միայն ամառներն են վերադառնում գիւղերը:

**- Ընդհանուր տպաւորութեամբ ինչպիսի՞ն են նրանց կրթածութեան մակարդակը...**

- Թրքախօս համշէնահայերու մէջ բաւականին բարձր է կրթածութեան մակարդակը եւ շատ բարձր պաշտօնների հասած են հէնց այդ «խուլ» համշէնի կոչւածները եւ Թուրքիոյ կառավարութեան մէջն ալ եղած են ու կան, նախարարներ, պատգամաւորներ, երեսփոխաններ են տւած, օրինակ հէնց վարչապետի պաշտօն վարած Մետուտ Ելմազը, որը համշէնահայ է... Անշուշտ նման մեծ պաշտօնի հասնելով պէտք է, որ ըսի թէ հայ չէ արմատներով, նախընտրում են ասել, որ իրենք կենտրոնական Ասիայից եկած թուրքեր են, որոնք հայերու հետ կապրէին եւ հայերից վերցրեցին նրանց մշակոյթը, լեզուն, յետոյ հայերը գնացին... անհնարին ու անհեթեթ պատճառաբանութիւններ, որոնք իրականութեանը չեն համապատասխանում:

**-Արտաքնապէս ինչպիսի՞ն են, որպէս մարդաբանական տիպ...**

- Ոչ մի կապ չունեն կենտրոնական Ասիայի ժողովրդի հետ, գիշեր ու ցերեկ են ասես... Բաց մաշկով, շեկ մազերով, կապտաչեայ: Հետաքրքիրն այն է, որ նոյն լազերը չեն հերքում իրենց հայկական արմատը եւ ասում են ըստ վրացերէնի սումելի հայ կը նշանակէ, իրենց այդպէս են անւանում, բայց համշէնահայերը խուսափում են բարձրածայնել, որ հայեր են... Բուն համշէնահայերը տարբերում են եւ թէ լազերից եւ թէ Հովհայի համշէնցիներից ոչ միայն լեզուով, որ մի մասը հայերէն կը խօսի, միւսը թրքերէն, այլ նաեւ տարազով... «խուլ Համշէնի» կիները գլխաշոր են կապում, որ կոչւում է փուշի, փաթաթել բառից է, որ փուշանել են ասում, Աճառեանի բառարանում ներկայացւած է իբրեւ պարսկական ծագում ունեցող բառարմատ: Գեղեցիկ, գունաւոր գուլպաներ են գործում, հետաքրքիր կերակրատեսակներ ունեն, որոնցից է մուխլաման, որի

անւանումը հէնց մուխ-ծուխ բառից է ծագում, պանիրների խառնուրդ է, որ կարագի ու կաթնեղէնի հետ կը տապկին: Բաւականին շքեղ տներ եւ ապարանքներ են պահպանւած համշէնահայերից, քանի որ 19-րդ դարում արտագնայ աշխատանքի են մեկնել եւ շատ տարածւած էին Ռուսական կայսրութեան տարածքում որպէս փուռապաններ, հացագործներ եւ հրուշակագործներ եւ լաւ դրամ կը վաստակէին, վերադառնալով իրենց հայրենիք շքեղ ու գեղեցիկ տներ ին կառուցում, որ թրքերէն քոնաքէ կը կոչւի: Համշէնում մի թաղամաս կայ, որ Քոնաքլար կը կոչւի, որը հէնց այդպիսի տներով է հարուստ, ցաւօք դրանցից շատերն այսօր լքած են: Կան այնպիսի տներ, ուր մի ծերունի մամիկ է, որ կապրի մէջը, մնացածը գնացել են քաղաքներում ապրելու:

**- Կա՞յ ճանապարհ, որով հնարաւոր է սեփական հայրենիքում դաւանափոխ ու ծայտեալ այդ հայերի վերադարձը դէպի իրենց արմատները, դէպի հայկական ինքնութեան ճանաչումը...**

- Այսօր երիտասարդներու մէջ մեծ է հետաքրքրութիւնը դէպի իր արմատներն ու իր ով լինելը, սա դրական ազդեցութիւն կարող է գործել եթէ կապը քրիստոնեայ համշէնահայերու եւ ընդհանրապէս շփումը հայերու միջավայրին հետ տեղի ունենայ: Մօտաւոր հաշւարկով հարիւր հազար համշէնահայ կայ: Իհարկէ մեզ նման հայ չեն լինի, սփիւռքահայ չեն լինի, երեւանցի չեն դառնայ, բայց գոնէ իրենց արմատներու հանդէպ բաց ըլլան, կապերը հայերու հետ շատ ըլլան, ազատօրէն սերտեն իրենց պատմութիւնը եւ ընդունեն, որ հայ են: Թուրքիան ի վերջոյ կամաց-կամաց կը գնայ դէպի դեմոկրատական արժէքները եւ այդ հնարաւոր է: Համշէնահայը տեսակ է իր արժէքներով եւ մշակոյթով, որ մեր ազգի մի մասնիկը կը



Հեմշին աղջիկ



Գրքի հեղինակ՝ Յովան Սիմոնեանը

կազմել են մի հարստություն է՝ լաւ կը լինի, որ նա իրենով մնայ որպէս այդպիսին:

- Բաւականին սուղ քանակի է Ձեր գիրքը պարուն Սիմոնեան, եւ որպէս ուսումնասիրութիւն բաւականին արժէքաւոր միւթեր է պա-

րունակում իր մէջ: Պատմաբանի անհանգիստ միտքը ո՞ր է տանում Ձեզ այսօր, ի՞նչ նոր ձեռնարկումներ ունէք:

- Շնորհակալ եմ գնահատականի համար եւ ասեմ, որ անգլերէն է տպագրած գիրքը եւ հիմնականում եւրոպական ուսումնա-

կան կենտրոնների, գրադարանների համար է, իհարկէ նաեւ ազատ վաճառքի է դրած: Լաւ կը լինէր եթէ համաշխարհային ծանօթ լինէիր այդ գրքին, բայց անգլերէնի իմացութիւնը բոլորը չէ, որ ունեն, ուստի պատրաստուում է նաեւ այդ գրքի թուրքերէն թարգմանութիւնը: Յաջորդ ուսումնասիրութիւնս վերաբերում է հայ մելիքներուն եւ ազնւական տոհմերուն, որը դեռ իր ասելիքով կը ներկայանայ: Անցկացնում եմ ԴՆԹ տեստեր ազնւականներու տոհմերի ժառանգներու մէջ, որը մի մասն է կազմում հետագայ աշխատանքներիս: Յուսամ, արդիւնքների մասին կը խօսինք եւս մէկ անգամ:

**-Յաջողութիւն Ձեր աշխատանքներին ու ձեռնարկումներին եւ շնորհակալութիւն հարցազրոյցի համար:**



# ԿԵՈՒՆ ԹԱԳՈՒՇՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՑ ԴՈԿՒԱԾ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Դոկտ. Տեր Ներսես առաջ քահ.  
Ներսեսեան

Հին մատենագիտութիւն ունեցող բոլոր ժողովուրդներն ունեն իրենց գրի եւ գրականութեան պատմութիւնը: Հայ ժողովուրդը, որը պատկանում է հին եւ զարգացած մատենագիտութիւն ունեցող ժողովուրդների շարքին, հասկանալի է, որ չէր կարող թերամալ այս ասպարէզում: Հայ գրականութեան եւ արւեստի ուսումնասիրութեան ամենակարեւոր սկզբնաղբիւրները հանդիսանում են ձեռագրերը, որոնց քանակը, հակառակ օտար նաւաւորների աւերիչ գործողութիւններին, հասնում է 25000-ի: Այդ ձեռագրերն ունեն համաշխարհային գիտական արժէք եւ բարձր են գնահատուում գիտութեան ու արւեստի մասնագետների կողմից: Դրա շօշափելի փաստն այն է, որ այդ 25000 անբողջական ձեռագրերից միայն 11000-ն է պահուում Երեւանի Մատենադարանում, իսկ մնացեալը ցրած են աշխարհով մէկ:

Ինչպէ՞ս բացատրել այս երեւոյթը: Տառերի գիտից սկսած հայերի գրական գործունեութեան երկու



Լեւոն Գ. քազարոյի, Կեռան քագուիւու եւ նրանց զաւակների պատկերը. գործ՝ Թորոս Ռոսլինի



ունիցի գաւակ ի Սիոն» [Մատ. 4083]. կամ « այս Յակոբ ստացայ զա գաւակ ի Սիոն եւ ընտանեակ յերուսաղէմ, անջնջելի արծան ի մխիթարութիւն անձին եւ ի յոյս փրկութեան»[Մատ.4674]: Այս դէպքում «Սիոն»-ը հայ եկեղեցին է, իսկ «գաւակ»-ը՝ նւիրաբերած գիրքը:

Ձեռագրերի գրիչները շատ յաճախ հետեւեալ սրտառու յայտարարութիւնն են կատարում .

«Ձեռքս երթայ դառնայ ի հող, Գիրքս մնայ յիշատակող»:

Այս գիտակցութեամբ է, որ հայ գրիչները կտակ-յանձնարարութիւններ են թողնում յաջորդ սերունդներին ձեռագրի պահպանման եւ օգտագործման մասին: Մատենադարանի Համ.7446 ձեռագրի գրիչը հետեւեալ չափածոյ յիշատակարանն է թողել.

«Իշխանութիւն ոչ որ չունի  
Տալ գրաւական վասն արծաթի,  
Կան վաճառել ընդ քանքարի,  
Զի է յագատ ամենայնի»:

Միջին դարերում հայ գրիչները ձեռագիրը չէին համարում «աւար» կամ «կողոպուտ», այլ ինչպէս մարդ էակին համարում էին «գերի տարած» կամ «փրկւած գերութիւնից»:

Սուրբ Մարկոսի դիմանկարը պատկեր Կեռան քազուիու Աւետարանից

մեծ ազդակները եղել են մեր գրիչներն ու ստացողները կամ պատուիրատուները: Շատ վաղ շրջանից գիրք գրելը, տալն ու ստանալը մեր նախնիքները համարել են բարեպաշտական արարք: Յիսուսի այն խօսքը, թէ՛ «Գանձեցէք ձեզ գանձ երկնքի մէջ, ուր ոչ գող կարող է մօտենալ եւ ոչ ցեցն ապականել»: Մեր գրասէր վարդապետներն այն մեկնել են այս իմաստով, որ գիրք ընդօրինակել տալը կամ ստանալը հաւասար է երկնքում գանձ գանձելուն: Հէնց այդ պատճառով ձեռագրերի յիշատակարաններում ամենից յաճախ խօսքն այս է. «Երանի, որ





Յիսուս Քրիստոսի Յամբարծունը, պատկեր Կեռան թագուհու Աւետարանից

ցէ, Ամեն» [Մատ. 212]: Իսկ Ստեփանոս գրիչն իր 1410 թ. ընդօրինակած Յայսմաւուրքի յիշատակարանուն գրում է. «Եւ որ սրով եւ դանակով մերձենայ ի Սուրբ Գիրքս եւ հատանէ ի թղթս եւ ի գրոցս՝ սուրն հրեղէն կտրեսցէ զմէջս նորա» [Մատ.4737]:

### Վերադարձը

Սկսած ԺԲ դարի առաջին քառորդից մինչեւ ԺԴ դարի երկրորդ կէսը Կիլիկիայում մշակութային միւս ճիւղերին զուգահեռ, անմախքնաբար ծաղկում է ապրում մանրանկարչութիւնը՝ իւրայատուկ տեղ գրաւելով միջնադարեան հայ եւ համաշխարհային մշակոյթի պատմութեան մէջ: Կիլիկեան մանրանկարչութեան դպրոցի ամենայայտնի ներկայացուցիչն է Թորոս Ռոսլինը: Նկարչի ծննդեան եւ մահուան թւականները չեն պահպանւել, բայց գիտենք, որ տասներկու տարւայ ընթացքում (1256-1268) Թորոս Ռոսլինի ստորագրութիւնով պահպանւել են եօթ ձեռագրեր եւ նաեւ երեք անստորագիր Աւետարաններ: Այդ անստորագիր Աւետարաններից մէկն է Կեռան Թագուհու Աւետարանը:

Այս ձեռագիրը ընդօրինակել է Աւետիս անունով գրիչը 1272 թւականին Կիլիկիայի Սիս քաղաքում Կեռան թագուհու պատւէրով: Ձեռագրի յիշատակարանում երկու անգամ նշուում է գրչի անունը, սակայն նկարչի մասին կայ միայն այս գնատականը. «...եւ ի ձեռն այլում հմուտ եւ յարգի յարիեստ գրչութեան զարդարեալ զսա խորանաւք եւ ծաղկաւ է վայելչութեամբ եւ ոսկիապատ պայծառութեամբ»: Այդ «հմուտ եւ յարգի յարիեստ գրչութեան» գնահատականին միայն արժանի էր Թորոս Ռոսլինը: Կեռան թագուհին ձեռագիրը նւիրում է Ակներ Վանքին: Ձեռագիրը այժմ գտնւում է

Երուսաղէմի ձեռագրերից մէկի գրիչը՝ Կոստանդին Վահկացին, իր 1413 թւականին ընդօրինակած Աւետարանի չափածոյ յիշատակարանում գրում է.

«Ոչ ոք հանէ սա ի յաստի, Ոչ տայ ի ձեռս անօրինի: Թէ յայլազգեաց ահ մի լինի, Դընեն պահուստ մի յամրոցի Կամ ի Կիպրոս կղզին տանի, Մինչ բարկութիւնն այն անցանի, Դարձեալ բերեն ի տոյն տեղի եւ վարձս առցեն ըստ վաստակի...»:

Ուշագրաւ կէտը այս յանձնարարութեան այն է, որ ձեռագիրը «գերութիւնից» փրկողը արժանի է «վարձատրութեան իր վաստակի համար»: Իսկ Ստեփանոս գրիչը

1653 թւականին իր գրած ձեռագրի յիշատակարանում ընթերցողներին խրատում է.

«Բան մի խրատ տամ լսեցէք Գիրքս ամանաթ ձեզ պահեցէք եւ կարդացէք.

Գերի երթայ, նա դարձուցէք»:

Աւագ գրիչը 1337թ. ընդօրինակած Աւետարանի յիշատակարանում այս հրահանգն է թողել ապագայ ընթերցողներին. «Այլ ոչ ոք մի իշխեսցէ զսուրբ Աւետարանս գողանալ, կամ թուղթ կտրել, կամ հանել ի սուրբ յովստէ Տաթելոյ մեծի եկեղեցոյն»: Նման արարքի համար հետեւեալ պատիժն է սահմանում նաեւ. «մասն եւ բաժին զՎայնմին, զՅուդային եւ զխաչահանւացն առցէ եւ անէծս ցաւազինս ժառանգես»:

Երուսաղեմի Սուրբ Յակոբեանց վանքում 2563 համարի տակ: Անյայտ է, թե այս ձեռագիրը երբ է մտել Երուսաղեմի ձեռագրային հաւաքածոյի մէջ: Մի տւեալ, որ կարող է լոյս սփռել այս հարցի շուրջ այն է, որ Երուսաղեմի միաբանները 1727 թականին ձեռագիրը պատում են սքանչելի ոսկեայ կազմերով՝ «ի յիշատակ Աբրահամ վարդապետին, Գրիգորին եւ Յովհաննէսին»: Այս երեքը՝ Աբրահամ Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը (1730-1734), Գրիգոր Ե. Պարոնտէր Շոթայակիր Պատրիարք Երուսաղեմի (1715-1749) եւ Յովհաննէս Կոլոտ Բաղիշեցի Պատրիարք Կոստանդնուպոլսի (1715-1741), աշակերտներն էին մեծավաստակ վարդապետ վարդան Բաղիշեցու (1730-1734), որոնք միաժամանակ բազմեցին Հայաստանեայց Եկեղեցու նւիրապետական երեք Աթոռների վրայ:

Ըստ Արբակ Մխիթարեանի (1969թ.) եւ Հայկական Համառօտ Հանրագիտարանի (2-րդ հատոր, 1995թ.), Կեռան թագուհու Աւետարանի մանրանկարչութիւնը բաղկացած է տասը խորաններից, Եւսեբիոսի ընծայական նամակը Կարպիանոսին, Մատթէոսի, Ղուկասի, Յովհաննէսի դիմանկարներից ու տիտղոսաթերթերից, տասներկու Տէրունական, եւ 103 լուսանցազարդերից: Առանձնայատուկ նշանակութիւն ունի Լեւոն Գ թագաւորի, Կեռան թագուհու իրենց հինգ զաւակների հետ պատկերը, այդ թւում

նաեւ ապագայ Հեթում Բ թագաւորի պատկերը, որոնք երկիւղածութեամբ կանգնած են գահի վրայ բազմած Քրիստոսի, Մարիամ Աստուածածնի եւ Յովհաննէս Սկրտչի պատկերի տակ: Գահի տակից լուսաշող ճառագայթներ են իջնում թագաւորական ընտանիքի ամէն մի անդամի վրայ, որպէս խորհրդանիշ աստուածային միջնորդութեան:

Համաձայն պատմական տւեալների, 1910 թականին մի շարք պատկերներ՝ այդ թւում նաեւ այս երկու պատկերները, կտրոււմ են բուն ձեռագրից... եւ դրանց հետքը անյայտանում է մինչեւ 18 Մայիս 2011թ., ժ.11:55, երբ ստանում են մի նամակ, որի մէջ ասոււմ է, թէ Սադրբիզ ընկերութեան Միջնադարեան ձեռագրերի Պրն.Տիմոթի Բոլտոնի (Timothy Bolton) թելադրանքով դիմում ենք ձեզ մեր հաւաքածոյում գտնուող ներփակ գոյգ պատկերների վերաբերեալ յաւելեալ տեղեկութեան համար: Ըստ նամակագրի տեղեկութեան, պատառիկները նախկինում պատկանելիս են եղել հոլանդացի Mi-chel Van Rijn, որի ողջ հաւաքածոն Պր.Թանասսիս Մարտինոսը գնել է 1987 թականին: Իմ առաջին պատասխան գրութեան մէջ յայտնեցի, որ դրանք անօրինաբար մկրատուած էջեր են մի հայկական ձեռագրից, որը սեփականութիւնն է Երուսաղեմի Հայոց Պատրիարքութեան եւ դրանք պէտք է վերադարձնել իրենց օրինաւոր հաստատութեանը, իսկ եթէ վաճառելու

նպատակ ունէք, առաջին առաջարկը՝ դրանք գնելու, շնորհէք Հայոց Պատրիարքութեանը (18 Մայիս 2011.13:59): Պատասխան նամակով յայտնում են, որ պատառիկների տէրը ոչ մի նպատակ չունի մանրանկարները վաճառելու, եւ եթէ կարող են փաստել պատառիկների կողոպտուած լինելու հանգամանքը, եւ նաեւ որ ձեռագրին պատկանելը, ապա նրանք պատրաստ են դրանք վերադարձնել Հայոց Պատրիարքութեան որպէս նւէր. աւելացնելով՝ «հակառակ որ դրանց պատկանելի գումար է տրւել» (although I had to pay a high price when purchased as part of a collection some twenty years ago, 28 June 2011 15:49).

Իմ պատրաստած «Memoandum for the restitution to the library of the Armenian Patriarchate of Jerusalem two illuminated leaves belonging to Jerusalem Armenian MS.2563, dated 1272» (թւագրուած 17 Յունիս 2011), լիուլի պատասխանեցինք պատառիկները վերադարձնելու առաջարկած պայմաններին Երուսաղեմի միաբանութեան մասնակցութեամբ եւ «ապահովեցինք դրանց վերադարձը տուն»: Սա հակիրճ պատմութիւնն է մի գործակցութեան, որի հիմքերը ամենաստոյգ կերպով գծել են մեր գրիչները եւ ձեռագիր պատւիրողները:

Հայաստանի անկախութեան 20 ամեակի տարեդարձի առիթով սրանից աւելի լաւ նւէր չէր կարող ակնկալել հայ ժողովուրդը: Այս նւիրատութեամբ վերականգնոււմ է Հայ եւ համաշխարհային գերագանց մի արւեստի գործ:

Հայոց Պատրիարքութեան եւ հայ ժողովրդի անունից խորին շնորհակալութիւն Տէր եւ Տիկին Թանասսիս Մարտինոսին, Մարիա Մերսինին եւ իր ողջ աշխատակազմին:

«Փառք... որ կարողացոյց գտկարս հասանել յաւարտ գործառութեանս այսմի»:



Հոլանդացի Տէր եւ Տիկին Թանասսիս Մարտինոսը, որոնք իրենց գնած մանրանկարչութիւնները որպէս նւէր վերադարձրին Երուսաղեմի հայոց պատրիարքարանին

## ԻՆՉՊԻՍԻՐ ՄԱՐԶԱՁԵՒ Է ՎՈՒԷՅԲՈՒԸ

*Արման Տ. Ստեփանեան*

Այսօր կարելի է ասել, թէ ֆուտբոլից յետոյ, աշխարհի ամենահետաքրքիր եւ ամենաշատ սիրուած մարզաձեւերից մէկը վոլէյբոլն է: Այն Թիմային սպորտ է, որի մրցումներին մասնակցում են թէ տղամարդիկ թէ կանայք: Իւրաքանչիւր թիմում հանդէս են գալիս 6-ական հոգի: Խաղադաշտը երկու հաւասար մասերի է բաժանուում խաղացանցով, որի բարձրութիւնը տարբերում է տղամարդկանց եւ կանանց համար: Իւրաքանչիւր թիմ փորձում է միաւորներ շահել՝ գնդակն հար-



Վոլէյբոլի ստեղծող Վիլիամ Մորգանը

ւածելով հակառակորդի գետնին: Ամբողջական կանոնները ծաւալուում է, սակայն խաղի մուտքերը սկսուում է թիմերից մէկի խաղացողների գնդակի փոխանցումով, սակայն ինքը գնդակ փոխանցողը կանգնում է սահմանային գծից դուրս: Գնդակը ստացող թիմը չպէտք է թոյլ տայ, որ գնդակը դիպչի իրենց դաշտի գետնին: Նրանց իրաւունք է տրուում ընդա-



Իրանի վոլէյբոլի ազգային հաւաքականը Ճապոնիայի մրցութիւններում

մէնը երեք անգամ հարւածել գնդակին եւ այդ երեք հաարւածից յետոյ նրանք պարտաւոր են գնդակը փոխանցել հակառակորդի կիսադաշտը, այլապէս նրանք կը կորցնեն մի նիշ: Դրանից բացի ըստ խաղի կանոնների, ամէն խաղացողի չի թոյլատրուում երկու անգամ իրար յետեւից հարւածել գնդակին: Այսպիսով խաղը շարունակուում է, իսկ այն թիմը, որին

յաջողուում է աւելի շուտ հաւաքել 25 միաւորը, յաղթող է ճանաչուում տւեալ պարտիայում: Իսկ ընդհանուր մէկ մրցութեան ընթացքում յաղթում է այն թիմը, որը կարողանում է 5 պարտիաներից երեքում յաղթանակի հասնել:


1895 թականի Փետրուարի 9-ին Վիլիամ Մորգանը, որը ԱՄՆ-ի Մասաչուսեթսի համալսարաններից մէկի ֆիզկուլտուրայի տնօ-

## ՎՈՉՆԻԱՅԿԻՆ ԼԻԷՐՊՈՒՆԻՄ

րենն էր, ստեղծեց մի նոր խաղ, որը Mintonette էր կոչում: Այն ժամանակ այս նորաստեղծ մարզածեղ խաղում էին ժամանցի համար եւ որեւէ սահմանափակում չկար խաղացողների թւի մէջ: Նոր խաղի կանոններից մի քանիսը վերցւել էր թենիսից եւ հանդրուկից: Յետաքրքիրն այն է, որ հէնց այս վայրից 10 մղօն (16կմ) հեռաւորութեան վրայ, մի քանի տարի յետոյ ստեղծուեց միւս սիրուած մարզածեղը՝ բասկետբոլը: Առաջին վոլէյբոլի կանոնները, գրեց հէնց ինքը Վիլեան Մորգանը: Նա խաղադաշտի տարածքը որոշեց 25x50 ֆուտ (7.6x15.2 մ): Այս նոր տեսակի մարզածեղի առաջին մրցութիւնները, 1896 թւականին տեսնելով Ալֆրեդ Յալստեդը, այն կոչեց վոլէյբոլ:

Դրանից յետոյ 1900-ին ԱՄՆ-ի հիւսիսային հարեւան Կանադայում տարածուեց այս նոր սպորտը: Իսկ 1947-ին հիմնադրուեց միջազգային վոլէյբոլի ֆեդերացիան: Իսկ առաջին միջազգային տղամարդկանց մրցութիւնը կայացաւ 1949-ին, իսկ կանանցը՝ 1952-ին: Չնայած, որ Բրազիլիան աշխարհով մէկ յայտնի է որպէս ֆուտբոլի աստղերի երկիր, սակայն զարմանալիօրէն հէնց դրա կողքին նաեւ այն համարուում է աշխարհում ամենաշատ սիրուած վոլէյբոլի երկիրը, իսկ դրանից յետոյ են արեւելեան Եւրոպան եւ ինչու ոչ՝ հէնց Ասիան:

Վերջերս յայտնի էր դառել թէ աշխարհի առաջին թենիսիստուհի Կառոլին Վոզնիացկին պատրաստուում է մասնակցել գոլֆի պրոֆեսիոնալ մրցաշարի: Թենիսիստուհին աչքաթող չի արել նաեւ ֆուտբոլը: Նա Լիւերպուլի մոլի երկրպագուհի է: Յանգստեան օրերին Վոզնիացկին այցելել է Ստեմֆորդ Բրիջ, որտեղ նրա սիրելի ակումբը յաղթանակ է տօնել Չելսիի նկատմամբ: Չի բաց թողնի Կառոլինը նաեւ Մանչեստեր Սիտիի հետ կայանալիք առաջիկայ մրցավեճը: «Կիրակի օրը պատրաստուում եմ գնալ Էմֆիլդ եւ դիտել Մանչեստեր Սիտիի հետ խաղը» - գրել է Վոզնիացկին իր Twitter-ում:



## ՌՈՆԱԳՈՅԻ ՆԷՐԸ ՊԱՂԵՍԻՆՅՈՒ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ

Ռէալի յարծակւող Քրիստիանօ Ռոնալդօն աճուրդի ժամանակ վաճառել է իր խաղակօշիկները եւ հասոյթը՝ 2400 եւրօ, նւիրաբերել պաղեստինցի երեխաների համար: Վաճառքը սկսւել է 700 եւրոյից եւ արդիւնքում՝ գրեթէ եռապատկւել: Ֆուտբոլիստը գումարը փոխանցել է Գազայի հատածի դպրոցներին, տեղեկացնում է Goal.com-ը:

## ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԱՐԿ ԽԱՂԱՎԱՇՏՈՒՄ

Իսպանիայի երկրորդ դիւիզիոնում հանդէս եկող Սելիա թիմի ամերիկացի բասկետբոլիստ Ռիջ Մաքիթը ազգային առաջնութեան շրջանակներում տարած յաղթանակը բաւական իւրայատուկ կերպով է տօնել: Խաղի աւարտից անմիջապէս յետոյ նա խաղահրապարակ է հրաւիրել իր կեանքի ուղեկից Սամանտային, ծնկի գալով, առաջար-

կել է նրան իր ձեռքն ու սիրտը: Տրիբունաների բուռն ծափահարութիւնների ներքոյ Սամանտան դրական պատասխան է տւել իր ընտրեալին: Այս տեսարանը պարզապէս հիացրել է ներկայ գտնուողներին:



6	2	8			9			
1		9		5	6			4
5			8	7	2			1
9			5	1		4	6	7
8		7					3	
	6			2		9		
		4	9		7	1		3
			2		1	7		9
	9	1				2	8	

	7	6	9	3				
			1		8	4		
3				2	6			
	4	5		8		1	3	
	1		5	6	7		9	
2			3	1			5	8
	6	8			2			5
7		4				9	8	2
	2				3	7	1	

6				1				
						8		7
	4			2				
		2				5		
	7		9		6			8
9				5				4
	2				8			6
1		3		2		9		
			7					4

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	g	w	խ		ա	ր	բ	ա	ն	ե	ա	կ		հ	ա
2		լ	ա	յ	ն		ա	մ	ա	ն	լ	ա	մ	ա	ն
3	ա	բ	բ	ա	հ	ա	յ	ր		ք	ա	ր	ա	յ	օ
4	ն	ե	կ	տ	ա	ր		ա	լ		լ	ա	օ		ր
5	կ	ր	ա	կ		բ	ե	կ	ա	ն	ու	մ		ա	ր
6	ե	տ	ն	ա	բ	ե	մ		հ	ա	ր	ու	ս	տ	
7	տ	ա	ք	ն	ա	լ		գ	ի		չ	ր	ա	լ	ի
8	ա	զ		ի	ց		կ	ա		ա		զ	ո	ա	լ
9		ա	ր	չ	ա	կ	ա	լ	ա	ն		ա	ն	ս	
10	ա	ր	ու		տ	ո	ղ	ա	չ	ա	ր		ա		ե
11	ն	ե	մ	ք		ր		զ	ու	ո		ղ	մ	ա	կ
12	վ	ա	խ	տ	ա	ն	զ	ա	ն	ա	ն	ե	ա	ն	
13	ի	ն	ա		ն	զ	ոյ	ր		կ	ա	ղ	ն	ա	տ
14	չ		մ	ե	լ	ա	ն		ձ		ն		ի	ս	կ
15	տ	օ		ս	ի	ն		մ	ի	չ	ի	ն	ք		ա

## Սու-Ղօ-Քու

1-9 թվերը տեղադրել հորիզոնական եւ ուղղահայեաց սիւնեակներում այնպես, որ ոչ մի թիւ չկրկնւի ոչ սիւնեակներում եւ ոչ էլ 3x3 տնակներում

## Անցեալ համարի պատասխան

**«Յոյս» երկշաբաթաբեր ըր Վաճառուճ Է**

«Նաշրէ Զէշմէ» Գրախանուրուճ-ուճ

زیر پل کریم خان، تیش میرزای شیرازی،

«نشر چشمه»

تلفن: ۸۸۹۰۷۷۶۶

**«Յոյս» երկշաբաթաբեր ըր Վաճառուճ Է**

«ԼՈՒՔՍ» Վաճարատուճ-ուճ

پل تهران نو، روبروی شیرمرد پلاک ۷۴

فروشگاه لوکس

تلفن: ۷۷۸۳۳۲۱۳

**«Յոյս» երկշաբաթաբեր ըր Վաճառուճ Է**

«ՐԱՖՖԻ» Զամալիր-ուճ

تهران نو، خیابان شهید میر حسینی (زرکش)

کوچه شهید شموئیل اینویا پلاک ۲

تلفن: ۷۷۸۳۳۷۲۶

**«Յոյս» երկշաբաթաբեր ըր Վաճառուճ Է**

«Ի.Ա.Մ.Մ.» Միուրիւճ-ուճ

مجیدیه جنوبی، ۱۶ متری دوم، کوچه شهید

محمد علی اکبری، پلاک ۷۳


تلفن: ۷۷۸۲۵۹۸۹ ۷۷۸۲۵۹۷۹

**Art**

**system**



Arthur , Alen , Alex



خدمات ماشینهای اداری

سرویس و تعمیر چاپگرهای لیزری جوهرافشان HP و سوزنی EPSON

تلفن: ۸۸۳۲۱۴۳۶-۷ و ۸۸۳۱۵۳۴۳-۴

فکس: ۸۸۸۳۳۰۰۰

آدرس: تهران، خیابان ایرانشهر جنوبی، پایین تراز خیابان سمیه،

شماره ۷، طبقه سوم، واحد ۵



از نگاه دوربین  
گاریک آوانسیان  
عکاس معاصر ارمنی

دوهفته نامه  
اجتماعی فرهنگی  
هوپس



دوهفته‌نامه  
اجتماعی فرهنگی

# هویس

شماره ۱۶،۱۱۲ آذر ۱۳۹۰  
سال پنجم



## آوازه‌خوان سیاستمدار

صاحب امتیاز و مدیر مسؤول:  
لئون آهارونیان

دبیر تحریریه: روبرت صافاریان

شورای نویسندگان:

کارمن آذریان

لیا خاچکیان

گارون سرکیسیان

آرمینه ملیک ایسرائیلیان

مدیر هنری: لیا خاچکیان

ویراستار بخش فارسی: نسیم نجفی

وب سایت: کاجیک صافاریان

ورزش: آرمان در استپانیان

اشتراک: کاترین یعقوبی

نشانی: تهران، خیابان انقلاب، بین  
ولی عصر و فلسطین، شماره ۱۰۴۸

تلفن: ۶۶۴۹۵۱۸۰

۶۶۴۹۲۶۹۳

تله-فاکس: ۶۶۴۹۵۲۰۸

نشانی وب سایت:

www.hooys.com

وب سایت فارسی:

http://farsi.hooys.com

پست الکترونیکی:

hooys@inbox.com

## در این شماره

- ۲ در صفحات ارمنی این شماره
- ۳ احتمال همکاری لئون تر پطروسیان با حزب ارمنستان مرفه سورن موسائیلیان
- ۴ مقاله ای درباره هشتادسالگی روزنامه آلیک و بازتاب آن در سایت هایلی روبرت صافاریان
- ۵ جرات می کنی از آلیک انتقاد کنی؟ آن هم به فارسی؟ پس بگیر!
- ۷ عذرخواهی اردوغان از کردها  
ناثیرا هاپرومیان
- ۸ عکاسان معاصر ارمنی: گاریک آوانسیان
- ۱۰ اهمیت راه آهن ایران-ارمنستان: اتصال آسیا به اروپا  
سرکیس مانوکیان
- ۱۳ هوسپ امین: از کلکته تا لندن، از مسکو تا تفلیس، برای آزادی ارمنستان  
هویک میناسیان

## بخش ارمنی

- ۲ مصاحبه مطبوعاتی شورای خلیفه‌گری  
کاترین یعقوبی
- ۴ میزگردی درباره دشواری‌های مطبوعات ارمنی

## آوازه‌خوان سیاستمدار

- ۸ مصاحبه تکان‌دهنده شارل آژناوور با ماهنامه نوول آرمنی
- ۱۳ از آژناوور مایوس و اندوهگینیم  
هایگ ناگاشیان

- ۱۵ دیدگاه: ویکیپدیای ارمنی  
کولیا در هوانسیان
- ۱۶ مصاحبه با هوان سیمونیان، نویسنده کتاب هامش  
آرمینه ملیک ایسرائیلیان
- ۲۰ بازگرداندن نقاشی‌های انجیل ملکه کران  
دکتر نرسس نرسسیان
- ۲۴ ورزش  
آرمان در استپانیان

# گوشه‌هایی از آن‌چه در صفحات ارمنی این شماره هوئیس آمده است

غلط است و او باید از این موضع دست بکشد. گشایش مرز تنها و تنها باعث مصیبت خواهد بود و حتی ممکن است هستی دولت ارمنستان را به نابودی تهدید کند. تصور کنید با گشایش مرزها صدها ترک می‌توانند به ارمنستان بیایند، کار و کاسبی راه بیاندازند، زمین و خانه بخرند، با زنان ارمنی محشور شوند، حتی با آن‌ها ازدواج کنند و یک نسل دورگه به وجود بیاورند. در یک اوضاع وحشتناکی مرد ارمنی‌ای که خانه‌اش را فروخته ترک دیار خواهد کرد و آینده همین وطن کوچک‌مان هم به خطر خواهد افتاد.

## ویکیپدیای ارمنی و حضور زبان ارمنی در اینترنت

در این شماره هوئیس، کولیا درهوانسیان در مقاله‌ای به حضور ارمنی و زبان ارمنی در اینترنت و به طور خاص در ویکیپدیا می‌پردازد. او گفت‌وگوی خود با یکی از دوستان ارمنستانی‌اش را با خواننده در میان می‌گذارد. دوست او معتقد است که در عصر حاضر قدرت ملت‌ها با حضور آن‌ها در فضای مجازی مشخص می‌شود، که به معنای حضور زبان آن‌ها در این فضا است. او معتقد است که ویکیپدیای ارمنی بسیار ضعیف و منابع موجود در آن اندک است. درهوانسیان در پاسخ دوستش می‌گوید که آیا باید انتظار داشته باشیم که ارمنی با ده میلیون نفر جمعیت که نیمی از آن ارمنی نمی‌دانند یا تسلط اندکی به زبان ارمنی دارند، کار زیادی در این زمینه بکنند؟ وقتی منابع به زبان انگلیسی (برای ما) و به زبان روسی (برای شما) وجود دارد، طبیعی است که کسی سراغ منابع ارمنی نرود. اما دوست او اصرار می‌کند که حضور قوی‌تر در فضای مجازی خیال‌پردازی و رویا پروری نیست. کما این که منابع ارمنی موجود در اینترنت در حال حاضر از منابع گرجی و ترکی آذربایجانی و کردی هم کم‌تر است.

نویسنده بعد از نقل این گفت‌وگو، از مقامات مسؤول جمهوری ارمنستان، مخصوصاً وزارت علوم و وزارت فرهنگ ارمنستان می‌خواهد که به این زمینه بیش‌تر توجه کنند و بسیج مترجمان و نویسندگان ارمنی برنامه مشخصی برای افزایش حجم منابع ارمنی در اینترنت تدوین کنند. گفتنی است که در ارمنستان شوروی دایره‌المعارفی



